



Գ Լ Ո Ր Բ Ո Ւ Մ



*Հրատարակում է
«Հայուստագարդ» ՓԲԸ ակցիոներները*

5 (26)

ԵՐԵՎԱՆ

2012

ԳԼՈՒԲՈՒՍ

Թիվ 5 (26), 2012

«ԳԼՈՒԲՈՒՍ» ՏԵԼԵԿՄԱԳՐԻ ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Աշոտ Թավադյան

ՀՊՏՀ տնտեսամաթեմատիկական մեթոդների
ամբիոնի վարիչ, տ.գ.դ.

Գագիկ Հարությունյան (համակարգող)

«Նորավանք» ԳԿՀ գործադիր տնօրեն, ք.գ.թ.

Էդուարդ Լ. Դանիելյան

«Նորավանք» ԳԿՀ խորհրդական, ս.գ.դ.

Կարեն Վ. Կարապետյան

«Գազպրոմբանկի» առաջին փոխնախագահ,
տ.գ.դ.

Մուշեղ Լալայան

ՀՀԿ փոխնախագահ

Սևակ Սարուխանյան

«Նորավանք» ԳԿՀ փոխտնօրեն, ք.գ.թ.

Վարդան Հարությունյան

«Հայհուսգազարդ» ՓԲԸ վարչության նախագահ
-գլխավոր տնօրեն, տ.գ.թ.

ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Գլխավոր խմբագիր

Գագիկ Հարությունյան

Գլխավոր խմբագրի տեղակալ

Սևակ Սարուխանյան

Պատասխանատու խմբագիր

Խոնարհիկ Քարաուղանյան

Պատասխանատու քարտուղար

Լուսինե Բաղրամյան

Աննա Ժամակոչյան

Արա Մարջանյան

Արեստակես Միմավորյան

Տիգրան Հարությունյան

Էջաղրոդ-ձևավորող

Տաթևիկ Քարաուղանյան

ԳԼՈՒԲՈՒՍ

Թիվ 5 (26), 2012

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐ

<i>Արեստակես Մինավորյան</i> Քրիստոնյաները ժամանակակից Թուրքիայում	5
<i>Ռուբեն Մելքոնյան</i> Թուրքիայի հայության ինքնակազմակերպման դրսևորումների շուրջ	15
<i>Վահրամ Հովյան</i> Հունաստանի հայ համայնքը արդի փուլում	20
<i>Տիգրան Ղանալանյան</i> Ֆրանսիայի հայ ավետարանական համայնքը	29
<i>Թամարա Վարդանյան</i> Թիֆլիսյան իրականություն. հայ-վրացական հակասությունների շուրջ	37

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ

<i>Սոնա Մանուսյան, Աննա Ժամակոչյան</i> Գիտելիքի հանրային արժևորման առանձնահատկությունները Հայաստանում	46
<i>Մանվել Մարտիրոսյան</i> Հայաստանցի ինտերնետ-օգտատիրոջ պատկերը	62
<i>Լուրեր</i>	66

ԱՇԽԱՐՀԱՔԱՂԱՔԱԿԱՆ

<i>Հրայր Արզումանյան</i> Կովկասը գլոբալ անվտանգության համակարգում	70
<i>Արա Մարջանյան</i> Ադրբեջանական Հանրապետության նավթային ոլորտը	73
<i>Հուշագիր հեղինակին</i>	85

Հայկական համայնքներ

ՔՐԻՍՏՈՆՅԱՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ (բողոքականներ և կաթոլիկներ)

Արեստակես Միմավորյան՝

Փետրվարին համաշխարհային լրատվամիջոցները հաղորդագրություն տարածեցին, որ գերմանական *Via Dolorosa* քրիստոնյաների միությունն աշխարհի քրիստոնյաներին կոչ է արել բոյկոտել թուրքական «Ֆաթիհ 1453» ֆիլմը, որն, ըստ էության, հակաքրիստոնեական բովանդակություն ունի: Ֆիլմը վերաբերում է Կոստանդնուպոլսի նվաճմանը, որով ընկավ ժամանակին աշխարհաքաղաքական մեծ դերակատարում ունեցած քրիստոնեական մի կայսրություն: Վերջին տասնամյակում Անկարայի դեկավարներն, անչափ տպավորված օսմանյան դարաշրջանի ձեռքբերումներով, ապրում են կարոտախտի ժամանակներ, և այսօրինակ ֆիլմերը հասարակության մեջ նոր տրամադրություններ ու գաղափարներ ձևավորելու նպատակ ունեն, որը քրիստոնյաների հանդեպ անհանդուրժողականության դրսևորումների նոր ալիքի կարող է հանգեցնել:

Թուրքերը, հատկապես «քաղաքակիրթ թուրքերը», շատ են սիրում ասել, որ նույնիսկ այն ժամանակ, երբ իսլամը հասարակության և պետության հիմքն էր կազմում, ոչ մուսուլմանները, օգտվելով իրենց կրոնական ազատությունից, հանգիստ ապրում էին երկրում: Պատմությունը ցույց է տալիս, որ նման լավատեսությունն ընդամենը թուրքերի ֆանտաստիկ երևակայության արդյունքն է, հավանաբար ինչ-որ բան ջնջվել է նրանց հիշողություններում: Ողջ օսմանյան ժամանակաշրջանը կարելի է բնութագրել որպես մարդկությանն ու քաղաքակրթությանն ուղղված հարված, որն

¹ «Նորավանք» ԳԿՀ Հայագիտական կենտրոնի ղեկավար:

ուղեկցվում էր տեղաբնիկների համատարած ջարդերով, իսլամացմամբ և ուժացմամբ, եկեղեցիների ոչնչացումով կամ, լավագույն դեպքում, մզկիթների վերածմամբ: Եթե ժամանակակից Եվրոպայում արդեն իսկ «կրախի» մատնված բազմամշակութայնության խնդիրը փորձում էին լուծել ինտեգրացիայի ճանապարհով, ապա օսմանյան և թուրքական իշխանությունները բազմամշակութային հանրության խնդիրը լուծեցին և շարունակում են կատարել բռնի ուժով, կարճ ասած՝ սա «թուրքական մուլտիկուլտուրալիզմի» քաղաքականության հետևանք է:

Եթե 20-րդ դարասկզբին այստեղ ապրում էին միլիոնավոր քրիստոնյաներ, ապա այսօր այդ թիվը, ըստ Թուրքիայի բողոքական եկեղեցիների ասոցիացիայի իրականացրած հետազոտության, կազմում է 120 հազ., այն նվազման միտում ունի, հակառակ այն լավատեսների, թե իբր հակառակ պատկերն է տիրում:

Չնայած թուրքական իշխանությունները ԵՄ-ին անդամակցման ճանապարհին խոստացել են ազատականացնել քրիստոնյաների իրավունքները սահմանափակող օրենսդրությունը, այդուհանդերձ, երկրի քրիստոնյա բնակչությունը՝ 0,1%-ը, դեռևս բախվում է անվերջանալի սահմանափակումների և խոչընդոտների: Դրա մասին են վկայում նաև Միացյալ Նահանգների կրոնական ազատությունների հանձնաժողովի կազմած ամենամյա զեկույցը, որտեղ նշվում են տարբեր դավանանքների ազատության նկատմամբ անհանդուրժող վերաբերմունք ցուցաբերող 16 պետությունները, որոնց մեջ է նաև Թուրքիան: Ինչպես նշում է ԱՄՆ միջազգային կրոնի ազատության հարցերով հանձնաժողովի ներկայացուցիչ Նինա Շինը, Թուրքիան այժմ օգտագործում է ավելի բարդ մեթոդներ, որոնք հանգեցնում են քրիստոնեական և ոչ մահմեդական փոքրամասնությունների չեզոքացմանը: Թուրքիան մահակի փոխարեն օգտագործում է բյուրոկրատական սահմանափակումները, որոնք խանգարում են եկեղեցիներին շարունակել իրենց գործունեությունը¹: Այդպիսի սահմանափակումների և ճնշումների են ենթարկվում նաև Թուրքիայի կաթոլիկ և բողոքական համայնքները:

¹ Վաշինգտոնում Անկարայի դաշնակիցները ձգտում են լռեցնել Թուրքիայի հակաքրիստոնեական քաղաքականության հասցեին հնչող քննադատությունը, <http://news.am/arm/news/98168.html>

Կաթոլիկներ. բզկտված հատվածներ

Կաթոլիկների թվաքանակը, տարբեր աղբյուրների համաձայն, կազմում է 29-34 հազար, Թուրքիայի ընդհանուր ազգաբնակչության 0,05%-ը: Ընդ որում՝ հետևորդները ցրված են 5 տարբեր ծիսակարգերի վրա հիմնված եկեղեցիներում: Ըստ այդմ, Թուրքիայում գործում են կաթոլիկ դավանանքի հետևյալ եկեղեցիները՝ Հայ Կաթոլիկե (հայկական ծիսակարգով), Հռոմի կաթոլիկ (լատինական ծիսակարգով), Հունա-բյուզանդական կաթոլիկ (հունական ծիսակարգով), Սիրիական և Խալդյան կաթոլիկ եկեղեցիները: Հարկ է ընդգծել, որ թեև այս համայնքները փաստացիորեն գոյություն ունեն և պետության կողմից ճանաչված են որպես գործող, մինչդեռ իրավական տեսանկյունից ճանաչված չեն և չունեն որևէ կարգավիճակ: Առանձին համայնքներ ճանաչելու հանգամանքն, ըստ որոշ հետազոտողների, վկայում է նաև այն մասին, որ Թուրքիան շարունակաբար վարում էր ազգային փոքրամասնությունների մեջ հնարավորինս շատ ինքնակառավարման կենտրոններ ստեղծելու քաղաքականություն, որով առավել կուժեղացվեին պետական մեքենայի մանիպուլյացիոն հնարավորություններն այդ շրջանակներում²:

Հռոմի կաթոլիկ եկեղեցին, ի տարբերություն ունիական հենքին ձևավորված մյուս կաթոլիկ եկեղեցիների, գերազանցում է հետևորդների քանակով, իսկ ազգային տեսանկյունից այն անընդհատ փոփոխություններ է կրել: Դեռևս 1935թ. այս եկեղեցու հետևորդ էին իտալական և ֆրանսիական ծագում ունեցող լևանտիները՝ մոտ 15 հազար (բացառությամբ Լիվորնոյից Թուրքիա գաղթած սեֆարիդյան հրեաների, որոնց ևս երբեմն դիտում են, որպես լևանտիներ, որոնք հիմնականում հուդայական կրոնի հետևորդ են), սակայն 1955թ. ստամբուլյան ջարդերը բացասական ներգործություն ունեցան համայնքի վրա, ինչի արդյունքն էր համայնքի անդամների անհամեմատ արագ միգրացիան Իտալիա և այլուր:

Հռոմի կաթոլիկ եկեղեցիները գլխավորապես կենտրոնացված են Ստամբուլ, Տրապիզոն, Ադանա շրջաններում: Ազգային տեսանկյունից հե-

² *Տարևիկ Խաչիկյան*, Միսիոներությունը Թուրքիայում, <http://www.lragir.am/armsrc/comments31494.html>

տնտեսության մեջ կան ֆրանսիացիներ, իտալացիներ, ասորիներ, մարունիներ, հույներ և անգամ հայեր, վերջիններս կարող էին լինել Հայ Կաթողիկե եկեղեցու հետևորդներ: Մինչդեռ բնակավայրում (հատկապես Տրապիզոն, Մերսին, Ադանա, Սամսուն քաղաքներում) սեփական եկեղեցու բացակայության պայմաններում ստիպված են հաճախել Հռոմի կաթոլիկ եկեղեցի, ինչով պայմանավորված էլ փոքրաթիվ հայ կաթոլիկները չեն կարող դասվել Հայ կաթողիկե համայնքի հետևորդների շարքին: Ընդհանուր առմամբ, այս եկեղեցու հետևորդ է շուրջ 21.000 հոգի: Խալդայան կաթոլիկ եկեղեցու հետևորդների թվաքանակը 1950-2010թթ. ընկած ժամանակահատվածում անընդհատ տատանվել է 2000-6000-ի սահմաններում: Ազգային տեսանկյունից այս եկեղեցու հետևորդներն ասորիներ ու կաթոլիկ դավանանքին հարող սիրիացի քրիստոնյա արաբներ են: Նրանք Թուրքիայում երբևէ մեծ թիվ չեն կազմել, և համայնքը համալրվել է ի հաշիվ Իրաքի դավանակիցների ներգաղթով, քանի որ այն հատկապես աճեց իրաքյան երկու պատերազմներից հետո: Հիմնականում ապրում են Դիարբեքիրում, Մերսին և Ստամբուլ քաղաքներում:

Թուրքիայի «կրոնական քարտեզից» իսպառ անհետացած բուլղարական կաթոլիկ համայնքի ճակատագիրն է կարծես կրկնում նաև հունաբյուզանդական կաթոլիկ համայնքը: Եթե 1950թ. ստամբուլյան այս համայնքը հաշվվում էր շուրջ 1000, ապա այսօր այն կազմում է սինվոլիկ թվաքանակ, ընդամենը 25 հոգի: Իսկ արտագաղթի հիմնական պատճառը, բնականաբար, ստամբուլյան ջարդերն էին: Այս տեսանկյունից միաթարական չէ նաև Հայ կաթողիկե համայնքի վիճակը. եթե ցեղասպանությունից առաջ գոյություն ուներ 120 հազարանոց համայնք, ապա այսօր այն գլխովին կրճատվել է՝ հասնելով 3000-ի, իսկ որոշ աղբյուրների համաձայն՝ 1500-ին մոտ է (տե՛ս աղյուսակը, էջ 14):

Թուրքիայի կաթոլիկները, կարելի է ասել՝ նաև բողոքականները, այսօրվա դրությամբ իսլամական ծայրահեղականների և ազգայնականների համար թիրախ խմբեր են: Կաթոլիկների նկատմամբ անհանդուրժողականությունը նոր երևույթ չէ. ի հայտ է եկել դեռ 1960-ական թթ.: Օրինակ, շինարարական գործունեություն իրականացնելու պատրվակով փորձ էր կա-

տարվում օտարել եկեղեցական հողերը կամ նույնիսկ քանդել եկեղեցիները, կամ դրանք հանձնել հանրային օգտագործման: Այդ պատրվակով դեռևս 1963թ. տեղական ինքնակառավարման մարմինները գրադարանի վերածեցին Գիրեսունի քաղաքի Հռոմեական կաթոլիկ եկեղեցին: 1976թ. Սամսունի քաղաքապետ Վեհբի Գյուլն իսկական արշավ սկսեց տեղի կաթոլիկ եկեղեցու դեմ՝ արձակելով եկեղեցու քանդման հրամանը, տեղում այգի կառուցելու նպատակով: «Պապի ավանակներին ուղարկել Վատիկան», «Եկեղեցի չէ, այլ միսիոներական օջախ» կարգախոսներով փորձում էին ընդդեմ եկեղեցու ոտքի հանել նաև Սամսունի թուրք հասարակությամբ: Թեև Վատիկանի և Իտալիայի հյուպատոսության միջամտությունից հետո խնդիրը լուծվեց հօգուտ եկեղեցու, սակայն 1994թ. Սամսունի եկեղեցին կրկին հայտնվեց ուշադրության կենտրոնում: Եկեղեցու ֆրանսիացի հոգևորական Պիեռ Բռունիսեին մեղադրեցին թուրք աշակերտներին կրոնափոխելու, պոռնոֆիլմեր ցուցադրելու և ակոհուլային խմիչքներ տրամադրելու մեջ, ինչը հրահրվել էր հոգեկան խնդիրներ ունեցող Աթիլա Նուրի կողմից: Այս աղմկահարույց ֆոնին կաթոլիկ համայնքի անդամները, որ հիմնականում ֆրանսիացիներ, ամերիկացիներ ու հայեր էին, լքեցին քաղաքը՝ հետագա բարդություններից խուսափելու համար, իսկ տասներկու տարի անց վանահայրը դանակահարվեց նույն հոգեկան խնդիրներ ունեցող անձի կողմից³:

2000թ. ի վեր Հռոմի կաթոլիկ եկեղեցու և հոգևորականների սպանությունների ու իրավախախտումների կտրուկ աճը վկայում է, որ համայնքը ճնշված վիճակում է: Մասնավորապես, 2005թ. ապրիլին անհայտ անձինք փորձել էին այրել Անթալիայի Սուրբ Պողոս մշակութային կենտրոնը, 2006թ. փետրվարին Տրապիզոնում սպանվել է կաթոլիկ հոգևորական Անդրեա Սանթորոն, Սամսունում դանակահարվել է վանահայր Ռենե Բռունիսեն, 2007թ. դեկտեմբերին Իզմիրում դանակահարվել է իտալացի վանահայր Ադրիանո Ֆրանչինին, 2010թ. սպանվեց Իսկենդերունի կաթոլիկ եպիսկոպոս Լուիջի Պադովեզեն: Փաստերը վկայում են, որ Թուրքիան հեռու է կրոնական հանդուրժողականությունից, և զուր են պետական մա-

³ Kapusen rahiplerin gelişi: <http://www.anadolukatolikkilisesi.org/samsun/tr/storia.pdf>

կարդակով հնչած կարծիքները, թե երկրում այլադավան և այլակրոն խմբերի հանդեպ հանդուրժողականությունը բարձր մակարդակի վրա է: Համենայնդեպս, տարբեր քրիստոնեական դավանանքների ուղղություններին պատկանող եկեղեցիների վերականգնմանը և վերանորոգմանն ուղղված քաղաքականությունը համոզիչ չէ և կրում է ձևական բնույթ: Այս քայլով իշխանությունները փորձում էին մեղմել Արևմուտքի գայրույթը կաթոլիկ և բողոքական հոգևորականների սպանությունների հետ կապված, ցույց տալ, որ իրենց երկրում քրիստոնյաների նկատմամբ հանդուրժողականությունը բարձր մակարդակի վրա է՝ իրենց վերագրելով մշակութային երկխոսության գաղափարը:

Երևում է, որ թուրքական իշխանություններն առանձնապես չեն ընդունում առկա խնդիրը, և ցանկացած միջադեպ, որն ավարտվում է մարդկային զոհերով, վերջիններիս կողմից ընկալվում է որպես մարդու իրավունքների հերթական խախտում, բայց ոչ ատելության և կրոնական անհանդուրժողականության հետևանք, որն աստիճանաբար կարող է կլանել հասարակության ավելի լայն շերտերի: Այս ամենի հետևանք է նաև այն, որ Թուրքիայի քաղաքացիների 48%-ը չի ցանկանում ապրել քրիստոնյա հարևանի հետ, հրեա հարևանների հետ՝ 54%-ը⁴:

Հատկանշական է նաև, որ ի տարբերություն հայկական և հունական պատրիարքների՝ կաթոլիկ եկեղեցիների ղեկավարների նշանակման հարցում պետության կողմից միջամտություն չի նկատվել: Վերջին երկու տարիներին Վատիկանի ներկայացրած պահանջները, այդ թվում և եկեղեցու իրավական կարգավիճակի հարցը, մերժվել են իշխանությունների կողմից՝ առանց որևէ բացատրության⁵: Միննույն ժամանակ, հարկ է նշել, որ կաթոլիկները երկփեղկված և անջատաբար գործող համայնքներ են, որի հիմնական պատճառն այս եկեղեցիների հետևորդների էթնիկ խայտաբղետությունն է: Այն մղում է համախմբվածության ազգային կարևորագույն (կրթական, բարեգործական և այլ) հարցերի շուրջ: Թուրքիայում կա-

⁴ Почти половина турков не хотят соседствовать с христианами, <http://www.sedmitza.ru/news/2363764.html>

⁵ Католической церкви отказано в юридическом статусе на территории Турции, <http://www.cnlnews.tv/2011/01/22/turkey/>

թուիկների միջև ավելի լուրջ համագործակցության ձև են մնում միջեկեղեցական հարաբերությունները (շոշափվում են կրոնական, համայնքային հեռանկարների հարցեր):

Բողոքականները և հարանվանությունները

Բողոքականների մասին տեղեկությունները բավական հակասական են, և հայտնի չէ, թե որ եկեղեցին ինչ քանակի հետևորդներից ու ազգային կազմից է բաղկացած: Ներկայումս բողոքականների քանակը չի գերազանցում 6000 հազարը, էթնիկ առումով այս ուղղության հետևորդներ են հայերը, հույները, ասորիները, բուլղարները, որոշ դեպքերում՝ նաև թուրքեր: Բացի Հայ Ավետարանական եկեղեցու հետևորդներից՝ 500 հոգի (ցեղասպանությունից առաջ գոյություն ուներ 60 հազարանոց համայնք), գոյություն ունեն հունական, բուլղարական և գերմանական բողոքական եկեղեցիներ՝ իրենց փոքրաթիվ համայնքներով, որոնք Թուրքիայի տարածքում գործել են օսմանյան ժամանակաշրջանից: Բողոքական մյուս ուղղություններն ու եկեղեցիները ձևավորվեցին ավելի ուշ:

1958թ. սկսած՝ Թուրքիա մուտք գործեցին Յոթերորդ օրվա ադվենտիստները. Ուիլյամ Միլլերի հետևորդները արագ հիմնեցին սեփական եկեղեցի, սակայն նրանց գործունեությունն անարդյունավետ էր: Ադվենտիստների կենցաղային և պահպանողական վարքը նույնականացվում էր Եհովայի վկաների հետ, և այդ հանգամանքն ստիպեց շատերին չհարաբերվել եկեղեցու հետ: Բողոքական այլ կառույցներ, հատկապես մեթոդիստական եկեղեցին, բավական լայն գործունեություն է ծավալում, ունի սեփական ռադիոհաղորդումներ, հրատարակչատներ և աստիճանաբար փորձում է դառնալ իշխող մյուս բողոքական եկեղեցիների կողքին:

Բողոքականների քարոզչության հետ են կապված այն պնդումները, որ վերջիններիս կատարած կրոնափոխության արդյունքում Թուրքիան կբռնի քրիստոնեացման ուղին, այդ պատճառով նրանց նկատմամբ հասարակության և ուժային կառույցների վերաբերմունքն ավելի խիստ ու ագրեսիվ է արտահայտված: Բողոքականներին վախի մթնոլորտում պահելու նպատակով թուրքական կողմը մուսուլման հասարակության մեջ այդ համայնքների նկատմամբ սերմանում է այն թեզը, թե իբր դրանք միսիոներական կետեր են:

Մասնավորապես, նշվում է, որ Թուրքիայում անշարժ գույք և հողատարածքներ գնող օտարները՝ կրոնական «ազատության» քողի տակ կատարած սադրանքների և տարբեր խոստումների միջոցով, հատկապես փողով երիտասարդներին կրոնափոխության գաղափարներ ներշնչելով, ինչպես նաև տեղի տնտեսական դժվարությունների պատճառով ժողովրդին կրոնափոխության են տանելու: Եվ բնական է, որ միսիոներությունը Թուրքիայում ընկալվում է որպես երկրի կրոնական միասնականությանը, անգամ տարածքային ամբողջականությանն սպառնացող գործընթաց: Ինչպես իրավացիորեն նկատել է Թուրքիայում երկար տարիներ ապրած կաթոլիկ վանահայր Ֆելիքս Քյորները, եթե քեմալական գաղափարախոսությամբ առաջնորդվող շրջանակներում գլխաշորը երկրի աշխարհիկ կարգերին հարվածող խորհուրդ ունի, ապա խաչն այս երկրում ընկալվում է որպես Թուրքիայի ավարտի սկիզբ:

Ինչպես պաշտոնական քննարկումներում և զեկույցներում, այնպես էլ հասարակության ազգատյաց և ազգայնական հատվածների կողմից օգտագործվող՝ քարոզչական գործունեությունը բնութագրող «*misyonerlik faaliyetleri*» թուրքերեն բառակապակցությունը, ըստ թուրք վերլուծաբան Գյուզիդե Ջեյհանի, խիստ բացասական ենթատեքստ ունի: «*Misyonerlik faaliyetleri*»-ն կարող է թարգմանվել որպես քարոզչական գործունեություն, որ չի պարունակում այդ գործունեության ո՛չ դրական, ո՛չ էլ բացասական գնահատական: Սակայն «*misyonerlik faaliyetleri*»-ը թուրքերենում ունի քարոզչական դավադրության, խառնակչության և ինտրիգի ենթաիմաստներ: Երկու բառերն էլ թուրքերենում ունեն բացասական ընկալում, և մեկ բառակապակցության մեջ նրանց բացասական իմաստը կրկնապատկվում է⁶:

Բողոքական միսիոներական խմբերը երկրի կրոնական համապատկերում փոփոխություն մտցնելու համար բավական նվազ հնարավորություններ ունեն: Պարզապես, նրանց գործունեությունը չափազանցելով՝ թուրքական տարբեր խմբավորումներ հարստացնում են երկրի թշնամիների ցանկը: Իրականում միսիոներական գործունեություն բողոքականները

⁶ Օթմար Օհրինգ, Գյուզիդե Ջեյհան, Թուրքիայում կրոնական ազատությունների մասին հետազոտություն, www.religions.am

ծավալում են ոչ թե թուրքերի, այլ բռնի իսլամացված հայերի, ասորիների, անգամ հույների սերունդների շրջանում, այսինքն՝ կատարվածը ոչ թե կրոնափոխություն, այլ կրոնադարձություն է և պահպանում է այն համայնքները, որոնք «ժառանգվել» են օսմանյան ժամանակաշրջանից: Հետաքրքիր է, որ իսլամից բողոքականության անցումը տեղի է ունենում նաև Ստամբուլի գնչուների շրջանում, ինչը, համենայնդեպս, նոր երևույթ է:

Այս տարիներին միայն մեկ բողոքական եկեղեցի է հնարավոր եղել կառուցել, այն էլ՝ Վանում. թեև իշխանությունները համաձայնության եկան վերոհիշյալ հարցում, այդուհանդերձ, Վանի շրջանից պատգամավոր ընտրված իշխող կուսակցությունը ներկայացնող Մուսթաֆա Բիլիչին հայտարարեց, որ կարիք չկա մուսուլմանական հասարակություններում կառուցել եկեղեցիներ, որոնք գործում են որպես սիոնիզմի խամաճիկներ: Բողոքական եկեղեցու սպասավոր Վահիդ Յըլդըզը նշում է, որ շատերն իրենց մեջ տեսնում են խաբեբաների և գաղտնի նպատակներ իրականացնող կառույցների⁷:

Քրիստոնյաների նկատմամբ անհանդուրժողականության հրահրման և տարածման մեջ իրենց լուման են ներդնում նաև թուրքական որոշակի գաղափարախոսությամբ առաջնորդվող լրատվամիջոցները: Ցանկացած քրիստոնեական եկեղեցու օրինական գործողություն լրատվամիջոցները ներկայացնում են բացասական լույսով, այն աստիճան, որ նույնիսկ որոշ եկեղեցիներ ներկայացվում են որպես ահաբեկչական կառույցներ: Եվ ինչպես վերջերս նշել էր հույն պատրիարքը, քրիստոնյաները թուրքիայում համարվում են երկրորդ կարգի մարդիկ:

Ատելություն սերմանելով քրիստոնյա փոքրամասնությունների, այդ թվում՝ ամենամեծ քրիստոնեական համայնքի՝ հայերի նկատմամբ, թուրքական իշխանությունները և այդ գործին լծված «աշխատող գործիքները» պարարտ հող են ստեղծում երկրի վերջնական ապաքրիստոնեացման համար: Այսօրինակ պայմանները քրիստոնյաներին թելադրում են ավելի զուսպ լինել իրենց կրոնական ազատություններում և բնակվել այդ երկրում «զետտոյի» կարգավիճակում:

⁷ Победа домашней церкви в атмосфере антихристианской враждебности в Турции, <http://barnabasfund.org/RU/News/Archives/Victory-for-Turkish-house-church-amid-anti-Christian-hostility.html?&quicksearch=%D0%A2%D1%83%D1%80%D1%86%D0%B8%D1%8F>

Հետևորդների թվաքանակն ըստ տարիների⁸

	1950	1970	1980	1990	1999	2000	2001	2002	2003	2004	2005	2008	2009	2010
Եկեղեցական կառույցներ														
Հայ կաթոլիկ եկեղեցի	7.000	8.500	4.500	3.670	3.680	3.650	3.800	3.750	3.700	3.670	3.670	3.650	3.450	3.450
Հունա-բյուզանդական կաթոլիկ եկեղեցի	1.000	134	70	50	40	40	45	-	-	40	40	-	25	25
Ասորական կաթոլիկ եկեղեցի	-	-	-	2.500	-	2.125	-	-	-	-	2.155	-	2.100	2.000
Իսլամական կաթոլիկ եկեղեցի	-	-	6.000	2.900	5.000	5.000	5.100	5.100	4.800	5.925	5.925	4.226	4.720	6.219
Հռոմի կաթոլիկ եկեղեցի	9.525	13.050	-	-	-	20.800	-	-	-	20.850	-	-	-	21.683

⁸ Ronald Roberson (source: *Annuario Pontificio*) The Eastern Catholic Churches 2010, (August 22, 2010), <http://www.cnewa.us/source-images/Roberson-eastcath-statistics/eastcatholic-stat10.pdf>

ԹՈՒՐՔԻԱՅԻ ՀԱՅՈՒԹՅԱՆ ԻՆՔՆԱԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՇՈՒՐՋ

Ռուբեն Մելքոնյան՝

Տարբեր առումներով բավական բարդ իրավիճակում գտնվող Թուրքիայի հայության շրջանում, հատկապես վերջին տարիներին, նկատվում են նոր զարգացումներ, որոնք ձեռք են բերում հետաքրքիր ուղղվածություն: Ավելորդ չէ նշել, որ ներկայումս Թուրքիայում տեղի ունեցող գաղափարախոսական և քաղաքական պայքարն ազգային-կրոնական փոքրամասնություններին որոշ սահմանափակ հնարավորություններ է ընձեռում, և, բացի այդ, հենց փոքրամասնությունների շրջանում ինքնագիտակցության մակարդակի բարձրացում է նկատվում: Այս ամենը հանգեցնում է նրան, որ Թուրքիայի հայության տարբեր խմբերում ի հայտ են գալիս ինքնակազմակերպման նոր և ուշագրավ երևույթներ: Հետաքրքիր է դիտարկել, որ ինքնակազմակերպման դրսևորումներ տեղի են ունենում ինչպես քրիստոնյա, այնպես էլ կրոնափոխ և արդեն կրոնադարձ հայության շրջանում: Հատկապես վերջիններիս պարագայում խնդիրն ունի մի քանի շերտ, և կարող ենք փաստել, որ ինքնության, ազգային ակունքների վերագնահատման անհատական փորձերն այսօր առավել «ինստիտուցիոնալ» բնույթ ստանալու միտումներ են դրսևորում:

Թուրքիայի հայության ինքնակազմակերպման այդպիսի դրսևորումներից պետք է համարել վերջին շրջանում ինքնաբուխ, երբեմն էլ թուրքական իշխանությունների լուր համաձայնությամբ ստեղծվող հայրենակցական միությունները: Հայտնի է, որ հայրենակցական միությունները բավական մեծ տարածում ունեն հայաստանյան և սփյուռքի իրականությունում,

¹ «Նորավանք» ԳԿՀ Հայագիտական կենտրոնի փորձագետ, ԵՊՀ Արևելագիտության ֆակուլտետի փոխդեկան, բ.գ.թ., դոցենտ:

սակայն հենց ստամբուլահայերի խոստովանությամբ՝ այդպիսի կազմակերպությունները որոշակիորեն նորություն են իրենց համար¹: Ընդամենը տարիներ առաջ սկիզբ առած գործընթացն այսօր զարգացման ուղի է բռնել, և կարելի է ասել, որ հայրենակցական միությունները հետզհետե սկսում են ավելի լուրջ դեր խաղալ թուրքահայ իրականության մեջ: Այսպես, մի քանի տարի առաջ ստեղծվել է «Մուսա լեռան հայրենակցական միությունը», այնուհետև՝ «Մալաթիայի հայերի միությունը», որոնք քրիստոնյա հայության կամ, այսպես կոչված, պաշտոնական համայնքի անդամներից բաղկացած կազմակերպություններ են:

Հայրենակցական միությունների կազմավորման խնդրի համատեքստում բավական նշանակալի զարգացում կարելի է համարել «Սասունցիների միության» ստեղծումը, քանի որ դրա կազմի մեջ կան ինչպես քրիստոնյա, այնպես էլ մեծ թվով կրոնափոխ և կրոնադարձ հայեր: Սա Թուրքիայի կրոնափոխ հայերի խմբեր ընդգրկող, թերևս, առաջին հասարակական կազմակերպությունն էր: Նկատենք նաև, որ այս կազմակերպությունը և վերջինիս նախագահ Ազիզ Դադջըն մի քանի համարձակ հայտարարություններ ու քայլեր արեցին Սասունում և հարակից տարածքներում հայկական պատմամշակութային ժառանգության պահպանման ուղղությամբ:

Սասունցիների միությանը հաջորդեց «Դերսիմի հայերի միության» ստեղծումը՝ դերսիմցի կրոնադարձ հայ Միհրան Փրկիչ Գյուլթեքինի նախագահությամբ: Այս կազմակերպությունը թե՛ պոլսահայ, թե՛ թուրքական և թե՛ հայաստանյան լրատվական դաշտում լայն անդրադարձների արժանացավ: Դերսիմահայերը նույնպես առաջնային են համարում պատմամշակութային ժառանգության պահպանման խնդիրները, սակայն ավելի համարձակ հայտարարում են, որ միությունը ներառում է Դերսիմի տարածքում բնակվող բռնի կրոնափոխված, հաճախ ալևիականություն ընդունած հայությանը: Հարկ է շեշտել նաև, որ հատկապես դերսիմցի հայերի շրջանում բավական հաճախ հանդիպում են իրական հայկական ինքնության վերադարձի կամ դրա մասին բարձրաձայնելու դեպքեր, որոնք լայնորեն տեղ են գտնում թուրքական և արտասահմանյան մամուլում: Նկա-

¹ «Կը լսէ՞ք, մենք հոս ենք...», Ակօս, 14, 10, 2011:

տենք նաև, որ քրիստոնյա հայերից կազմված հայրենակցական միությունները ևս ակտիվորեն հետաքրքրվում են բռնի իսլամացված հայերի խնդիրներով, և, օրինակ՝ «Մալաթիայի հայերի միությունը» վերջերս հայտարարեց, որ բազմաթիվ այլ միջոցառումներին զուգահեռ, պատրաստվում է կրոնափոխ հայերի մասին բազմակողմանի աշխատանք տանել²:

Վերջերս Թուրքիայի հայկական հայրենակցական միությունների շարքը համալրվեց ևս մեկով. ստեղծվեց համշենցիների առաջին հայրենակցական միությունը՝ բավական խոսուն անվամբ՝ «Հատիկ»: Իմիջիայլոց, այս անվանումը հարուցել է թուրքական համապատասխան կառույցների տարակուսանքը, և միության նախաձեռնողները դա ներկայացրել են որպես թուրքերեն հապավում: Հարկ է նկատել նաև, որ համշենցիների հայրենակցական միության մեջ ընդգրկված են ինչպես իրենց հայկական էթնիկ պատկանելությունն ընդունողներ, այնպես էլ դա արտաքուստ մերժողներ: Համշենահայերի հայրենակցական միության նախաձեռնողների խմբի մեջ հատկապես ակտիվ են համշենական «Վովա» երաժշտական խմբի հիմնադիր Հիքմեթ Աքչիչեքը և փաստաբան Քյամիլ Մուրթին: Միության մեջ ընդգրկված են համշենցիներ Ստամբուլից, Համշենից, Արդվիհից, Անկարայից³: Ինչպես հայտարարում են կազմակերպիչները, միության ստեղծման նպատակը համշենական մշակույթի և լեզվի պահպանումն է, որպեսզի թույլ չտան, որ. *«համշենական լեզուն ու մշակույթը կամաց-կամաց անհետանան ուրբանիզացիային զուգահեռ»*⁴: Հետաքրքիր է դիտարկել, որ հենց իրենք՝ համշենահայերը, որոշակիորեն ուշացած են համարում իրենց միության ստեղծումը, քանի որ Սև ծովի տարածաշրջանի այլ ժողովուրդներ, օրինակ՝ մուսուլման վրացիները (գյուրջու), լազերն արդեն վաղուց ունեն նմանատիպ կառույցներ: Ինչպես մնացած հայրենակցական միությունները, համշենցիները ևս շեշտն առավելապես դնում են մշակույթի, լեզվի պահպանման վրա, սակայն, այնուամենայնիվ, չեն կարող խուսափել ինքնության և պատմական հարցերից: Եթե այս միությունը

² «Կը լսէ՞ք, մենք հոս ենք...», Ակօս, 14, 10, 2011:

³ HADIG Hemişin kültürünü koruyacak, Agos, 14, 10, 2011.

⁴ «Ակունքի» հարցազրույցը համշենական ՀԱՏԻԿ կազմակերպության հիմնադիրների հետ (հարցազրույցը՝ Մելինե Անուսյանի), Ձայն Համշենական, Երևան, թիվ 11-12, 2011:

դառնա հարթակ Համշենի բարբառի, մշակույթի ուսումնասիրման համար, ապա դա անպայմանորեն հանգեցնելու է նաև համշենցիների էթնիկ ծագման հարցի քննարկմանը: Այս առիթով միության կազմակերպիչներից Քյամիլ Մութին նկատում է. «Նախ պետք է անհետացող մշակույթս, վերացող լեզուս պահպանեն, որպեսզի պատմությունս ուսումնասիրեն»⁵: Գաղտնիք չէ, որ Թուրքիայի համշենցիները, գտնվելով թուրքական պետական մեքենայի և քարոզչության բիրտ ճնշման տակ, մեծ մասամբ խուսափում են անդրադառնալ և բացահայտ ընդունել իրենց հայկական ծագումը: Ավելին՝ համշենցիների շրջանում իրենց հայկական կամ «համշենական» ծագումն ընդունողների կողքին կան անգամ մարդիկ, որոնք հայտարարում են, թե իրենք թուրք են: Մակայն համշենական մշակույթի և Համշենի բարբառի նկատմամբ նրանք գրեթե բոլորն ունեն նույնական վերաբերմունք և ձգտում են պահպանել այդ ամենը: Համշենահայերի «Հատիկ» միությունը, առաջնային հոշակելով համշենական մշակույթի և լեզվի պահպանումը, կարող է համախմբել վերը նշված բոլոր խմբերին, և այս առումով նմանատիպ միության հիմնադրումն, իրոք, պետք է համարել լուրջ առաջընթաց: Նկատենք նաև, որ համշենական մշակույթը և բարբառը կրողները, ծանոթանալով ընդհանուր հայկական մշակույթի առանձին տարրերի և հայոց լեզվի հետ, անպայմանորեն բախվելու են իրենց էթնիկ ծագման հարցի հետ, ինչի պատասխանն այդ պարագայում ավելի հստակ է լինելու նրանց համար:

Կարծում ենք՝ Թուրքիայի վարած էթնոքաղաքականության հետևանքով ձուլման դատապարտված տարբեր ժողովուրդներ նմանատիպ կառույցների ստեղծմամբ, իրենց մշակույթը և լեզուն պահպանելու ձգտմամբ փորձում են, երբեմն ենթազիտակցորեն, հակադարձել թուրքական ճնշումներին: Կարելի է ենթադրել, որ Թուրքիայի հայության տարբեր խմբերի հիմնադրած հայրենակցական միությունները խնդիր են հետապնդում լեզվի, պատմամշակութային ժառանգության պահպանման հետ կապված հարցերի վերհանման միջոցով վերագտնել կամ ամուր կառչել հայկական ինքնությանը: Թուրքահայ իրականությունում ընթացող զարգացումների

⁵ Նույն տեղում:

մեջ մենք նման ապացույցների արդեն իսկ հանդիպում ենք: Թուրքիայի հայության շրջանում ինքնակազմակերպման նման դրսևորումները հուսադրող են և կարող են հիմք հանդիսանալ «պաշտոնական» համայնքում ազգային արժեքների պահպանման, իսկ ուժացած հայության շրջանում՝ հայկականությանը վերադարձի համար:

ՀՈՒՆԱՍՏԱՆԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԸ ԱՐԴԻ ՓՈՒԼՈՒՄ

Վահրամ Հովյան՝

Թվաքանակը և սփռվածությունը

Հունաստանի հայ համայնքի թվաքանակը 20-րդ դարում պարբերաբար ենթարկվել է տատանումների: 1923թ. այն հասել է գագաթնակետին (120 հազ. մարդ)՝ կապված դեռևս 19-րդ դարի 90-ական թթ. հայկական կոտորածների, 20-րդ դարասկզբի Հայոց ցեղասպանության և հույն-թուրքական պատերազմի (1919-22թթ.) հետևանքով հազարավոր հայերի՝ դեպի այդ երկիր զանգվածային գաղթի հետ:

Հետագայում, սակայն, նկատվել է հայ բնակչության արտահոսք Հունաստանից ինչպես Խորհրդային Հայաստան, այնպես էլ եվրոպական ավելի զարգացած երկրներ ու ԱՄՆ:

Դեպի Խորհրդային Հայաստան գաղթը պայմանավորված էր հայրենադարձության քաղաքականությամբ, որին իր ակտիվ և ոգևորված մասնակցությունը բերեց Հունաստանի հայ համայնքը: 1924-27թթ., 1932-33թթ. և 1946-47թթ. Մեծ հայրենադարձության տարիներին Խորհրդային Հայաստանի ճամփան բռնեցին մոտ 60 հազ. հունաստանաբնակ հայեր¹:

Դեպի եվրոպական ավելի զարգացած երկրներ և ԱՄՆ գաղթը պայմանավորված է եղել և ներկայումս էլ պայմանավորված է սոցիալ-տնտեսական գործոններով: Թեև Հունաստանը ներկայումս անդամակցում է Եվրոպական միությանը, սակայն նրա տնտեսությունը լավագույններից չէ Եվրոպայում: Վերջին շրջանում Հունաստանում բռնկված տնտեսական ճգնաժամը, որն իր հետ բերեց նաև կառավարական ճգնաժամ, դրա վառ

¹ «Նորավանք» ԳԳՀ Հայագիտական կենտրոնի փորձագետ:

¹ Հայ սփյուռք հանրագիտարան, Երևան, 2003թ., էջ 370:

ապացույցներից է: Այդ պատճառով հունահայ համայնքի ներկայացուցիչների մեջ նկատելի է միտում ավելի բարեկեցիկ և ապահով կյանքի ակնկալիքով գաղթել դեպի եվրոպական ավելի զարգացած երկրներ ու ԱՄՆ:

Սրան զուգահեռ՝ վերջին երկու տասնամյակում Հայաստանի անկախացմամբ, պատերազմով, երկրաշարժով, շրջափակմամբ և այլ բարդություններով պայմանավորված՝ մեծ թվով հայերի արտագաղթի ալիքը, ի թիվս այլ երկրների, ուղղվել է նաև Հունաստան: Վերջին երկու տասնամյակների ընթացքում Հունաստան գաղթած հայերի թիվը հաշվվում է մոտ 30-40 հազ.²: Իսկ համաձայն որոշ տվյալների՝ Հայաստանից դեպի Հունաստան գաղթի արդյունքում տեղի հայ համայնքի թվաքանակը մեծացել է մոտ 7 անգամ՝ 12-13 հազարից հասնելով 70-80 հազարի³:

Հունաստանի հայ համայնքը սփռված է երկրի տարբեր բնակավայրերում: Ամենահայաեռոճ բնակավայրերը, այնուամենայնիվ, մայրաքաղաք Աթենքը և Սալոնիկն են, որտեղ հայերի թվաքանակը կազմում է համապատասխանաբար 10 և 11.5 հազ.:

Համայնքի արդի բնութագիրը

Լինելով Սփյուռքի ավանդական համայնքներից մեկը՝ Հունաստանի հայ համայնքը ներառում է հայկական հոգևոր-մշակութային, հասարակական-քաղաքական հարուստ կյանքի գրեթե ողջ ներկայակն ու բազմազանությունը: Այստեղ առկա են Հայության քաղաքական, հոգևոր, սոցիալական գրեթե բոլոր շերտերն իրենց կառույցներով: Հունաստանի հայ համայնքի ներքին բազմազանությունը երևում է հիմնականում երեք՝ սոցիալական, քաղաքական և հոգևոր հարթություններում:

Սոցիալական հարթությունում Հունաստանի հայ համայնքի ներքին բազմազանությունն ապահովող գործոն է համայնքի տարաբաժանումն ավանդական և ժամանակակից սփյուռքերի: Ավանդական սփյուռքը կազմում են Հայոց ցեղասպանության հետևանքով և դրանից առաջ Հունաստան

² *Arevik Badalyan*, Greek Armenian Community: the struggle continues

<http://arevik.wordpress.com/2010/06/27/greek-armenian-community-the-struggle-continues/>

³ Հունաստանի հայ համայնքը պատրաստվում է Հայաստանի նախագահի հետ հանդիպմանը <http://www.armenialiberty.org/content/article/2279357.html>

գաղթած հայերը: Իսկ ժամանակակից սփյուռքի մեջ են մտնում 1990-ականներից սկսած՝ Հայաստանից Հունաստան գաղթածները: Ուշագրավ է, որ տեսակարար կշռի առումով ժամանակակից սփյուռքը գերազանցում է ավանդականին, որի թվաքանակը տարբեր հաշվարկներով ներկայումս կազմում է 13-15 հազ.: Մնացյալ հատվածը կազմում են ժամանակակից սփյուռքի ներկայացուցիչները: Ընդ որում, եթե ավանդական սփյուռքում նկատվում է թվաքանակի նվազման միտում, ապա ժամանակակից սփյուռքում թվաքանակի ավելացման միտումը շարունակվում է, քանի որ թեկուզ ոչ նախկին տեմպերով, սակայն շարունակվում է Հայաստանից բնակչության արտահոսքը դեպի Հունաստան:

Քաղաքական առումով Հունաստանում շարունակում են գործել հայկական ավանդական երեք կուսակցություններից երկուսը՝ ՀՅԴ-ն (Հայ հեղափոխական դաշնակցություն) և ՌԱԿ-ը (Ռամկավար ազատական կուսակցություն): Այդ երկու ավանդական կուսակցությունների գործունեությունն ապահովում է Հունաստանի հայ համայնքում գաղափարաքաղաքական դաշտի բազմազանությունը՝ ազգային սոցիալիստական (ի դեմս ՀՅԴ-ի) և ազատական (ի դեմս ՌԱԿ-ի): Որպես քաղաքական մարմին համայնքում իր ուրույն տեղն ունի նաև ՀՅԴ Հայ դատի հանձնախումբը:

Հոգևոր բազմազանության առումով, թեև Հունաստանի հայ համայնքի գերակշիռ մեծամասնությունը կազմում են Հայ Առաքելական եկեղեցու հետևորդները, սակայն նրանց կողքին, թեկուզ սահմանափակ քանակությամբ, գոյակցում են նաև կաթողիկե և ավետարանական դավանանքի հետևորդ հայեր: Վերջիններիս թվաքանակը կազմում է մի քանի հարյուրական:

Հունաստանի հայ համայնքում ներկայումս գործում են 10 Հայ Առաքելական և 2-ական Հայ Կաթողիկե և Ավետարանական եկեղեցիներ: Եթե առաքելական հայերը, բացի մայրաքաղաք Աթենքից, սփռված են նաև Հունաստանի այլ քաղաքներում ու բնակավայրերում, ապա կաթողիկե և ավետարանական հայերը կենտրոնացած են հիմնականում Աթենքում:

Հայ Առաքելական, Կաթողիկե և Ավետարանական եկեղեցիների միջև հարաբերությունները կառուցվում են հիմնականում հանդուրժողականության և համագործակցության հիման վրա: Դավանանքային հողի վրա առճակատման դրսևորումներ, համենայնդեպս, հայտնի չեն:

Համայնքային կառույցները

Հունաստանի հայ համայնքի կենսունակությունը պայմանավորված է նաև նրա կազմակերպվածությամբ, որն ապահովվում է համայնքային կառույցների գործունեությամբ: Բացի ավանդական կուսակցություններից և հայկական երեք եկեղեցիներից (առաքելական, կաթողիկե և ավետարանական), որոնց մասին խոսվեց վերը, գործում են նաև բազմաթիվ և բազմազան այլ կառույցներ ու կազմակերպություններ:

Համայնքի ղեկավար կառույցներն են Ազգային առաջնորդարանը և Ազգային վարչությունը: Ազգային առաջնորդարանը ներկայացնում է հայ համայնքը պետության առջև:

Հունաստանի հայ համայնքի մյուս կազմակերպչական կառույցները ծագման առումով կարելի է բաժանել երկու խմբի.

- *Համահայկական կազմակերպությունների տեղական մասնաճյուղեր:* Այնպիսի համազգային կառույցներ, ինչպիսիք են ՀԲԸՄ-ն (Հայկական բարեգործական ընդհանուր միություն), ՀՄԸՄ-ն (Հայ մարմնակրթական ընդհանուր միություն), Համազգային հայ կրթական և մշակութային միությունը, Հայաստան համահայկական հիմնադրամը և այլն, ունեն Հունաստանի իրենց տեղական մասնաճյուղերը:
- *Համայնքային կազմակերպություններ:* Համահայկական կառույցների տեղական մասնաճյուղերի կողքին գործում են նաև համայնքային ծագման տարատեսակ կառույցներ, որոնցից կարելի է առանձնացնել հետևյալ հիմնական խմբերը.

1. Տեղեկատվական կառույցներ: Հունաստանում գործող հայկական տեղեկատվական կառույցները կազմում են տպագիր և էլեկտրոնային լրատվամիջոցները: Տպագիր լրատվամիջոցներից գործում են «Ազատ օր», «Նոր աշխարհ», «Հայաստան» և այլ պարբերականները:

Պարբերական հրատարակություններին վերջին շրջանում, կապված գիտատեխնիկական առաջընթացի, մասնավորապես՝ համացանցի լայն տարածման և կիրառման հետ, ավելացել են նաև էլեկտրոնային լրատվամիջոցները՝ համացանցային վեբ-կայքերը: Բացի Հայ Առաքելական եկեղեցու Հունա-

հայոց թեմի վեբ-կայքից (www.armchurch.am), ներկայումս գործում են նաև համայնքային վեբ-կայքեր (www.armeniancommunity.gr, www.armenika.gr):

Տպագիր և էլեկտրոնային լրատվամիջոցներն արտացոլում են հայաստանյան, Հունաստանի հայ համայնքի, Սփյուռքի այլ համայնքների կյանքը, ինչպես նաև անդրադառնում են համազգային իրադարձություններին:

2. Կրթական հաստատություններ: Հունաստանի հայ համայնքում ավանդաբար գործել և շարունակում են գործել հայկական կրթական հաստատություններ, որոնցից նշանավոր են հատկապես Սոֆի և Լևոն Հակոբյան, Զավարյան, Գալփակյան վարժարանները:

3. Մշակութային կառույցներ: Որպես մշակութային կառույցներ նշանավոր են, օրինակ, «Հայաստան» կենտրոնը, «Արաքս» մշակութային միությունը և այլն:

4. Սոցիալական կառույցներ: Այսպիսի կառույցներից նշանավոր է, օրինակ, «Երևան» միության գործունեությունը, որը զբաղվում է Հունաստանի ռազմական ուսումնական հաստատություններում սովորող հայ կուրսասնտների կեցության խնդիրներով: «Հայաստան» կենտրոնը նույնպես, բացի մշակութային գործունեությունից, ծավալում է ակտիվ հասարակական գործունեություն:

Մարտահրավերներ և հնարավորություններ

Հունաստանի հայ համայնքը Սփյուռքի մյուս համայնքների նման գտնվում է դրական և բացասական գործոնների ազդեցության ներքո: Դրական են այն գործոնները, որոնք նպաստում են համայնքի ամրապնդմանը և բարձրացնում նրա կենսունակությունը: Բացասական գործոնները նպաստում են համայնքի թուլացմանը:

Հունաստանի հայ համայնքի կյանքում ներակայումս բացասական գործոններ կամ մարտահրավերներ են հանդիսանում հետևյալները.

1. *Տնտեսական ճգնաժամը*, որը խթանում է հայերի արտագաղթն այդ երկրից:
2. *Թեմական խնդիրը*՝ Հայ Առաքելական եկեղեցու Հունահայոց թեմի պատկանելության հարցը, այն է՝ թեմը պատկանում է Մայր աթոռ Սուրբ Էջմիածնին, թե Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսությանը: 1920-

ական թթ. ստեղծված Հունահայոց թեմը սկզբում գտնվում էր Մայր աթոռ Սուրբ Էջմիածնի ենթակայության տակ: Սակայն 1958թ. այն անցավ Անթիլիասի կաթողիկոսության ենթակայությանը: Մայր աթոռ Սուրբ Էջմիածինը չհամակերպվեց այդ իրավիճակի հետ և ստեղծեց իրեն ենթակա թեմական կառույցը: Ներկայումս այդ երկու կառույցները շարունակում են գոյատևել և հավակնել համայնքի առաջնորդությանը: Թեև այդ հանգամանքն անառողջ մրցակցության պատճառ է դառնում, սակայն առ այսօր չի հանգեցրել համայնքի պառակտմանը:

3. *Լեզվի խնդիրը:* Թեև Հունաստանում գործում են մի շարք հայկական կրթական հաստատություններ, այնուամենայնիվ, դատելով համայնքային վեբ-կայքերի (www.armeniancommunity.gr, www.armenika.gr) հունալեզու լինելու հանգամանքից՝ կարելի է նշել, որ Հունաստանի հայ համայնքում նույնպես, ինչպես Սփյուռքի մյուս գաղթօջախներում, հայոց լեզվի պահպանման խնդիրը լուրջ է: Հայերի մի զգալի հատված չի տիրապետում մայրենի լեզվին: Հունաստանի հայ համայնքում նույնպես ազգային ինքնության աստիճանների, այդ թվում նաև՝ լեզվի կորուստն արագ է ընթանում:

Որպես համայնքային կյանքի վրա դրական ազդող, այն աշխուժացնող գործոն հանդես է գալիս Հայաստանի Հանրապետությունը: Հայաստանի անկախացումը 1991թ., Հայաստանի և Հունաստանի միջև դիվանագիտական հարաբերությունների հաստատումը (1992թ.), Հունաստանում ՀՀ դեսպանության հիմնումը նոր լիցք հաղորդեցին Հունաստանի հայ համայնքի կենսունակությանը և աշխուժությանը: Համայնքն իր թիկունքում սկսեց էլ ավելի շոշափելիորեն զգալ մայր հայրենիքի և պետության շունչն ու հովանավորությունը: ՀՀ սփյուռքի նախարարության հիմնադրմամբ (2008թ.) այս գործոնի ազդեցությունն էլ ավելի մեծացավ:

Հայաստանի Հանրապետության գործոնի ազդեցությունը հունահայ համայնքում կապված է ՀՀ դեսպանության, ՀՀ Սփյուռքի նախարարության գործունեության, Հայաստանի և Արցախի նախագահների և այլ բարձրաս-

տիճան պաշտոնյաների այցելությունների և այլնի հետ: Թվարկված գործոնները համայնքի վրա թողնում են հետևյալ բարերար ազդեցությունը.

- *Համայնքային կյանքի աշխուժացում:* ՀՀ դեսպանությունը տարատեսակ միջոցառումների կազմակերպմամբ և իրականացմամբ ակտիվություն է հաղորդում համայնքային կյանքին: Ուշագրավ է, օրինակ, հայկական բանակի կազմավորման 20-ամյակին նվիրված միջոցառումը 2012թ. հունվարի 26-ին⁴:
- *Մայր հայրենիքի հետ կապերի ամրապնդում:* Հայաստանի անկախացմամբ և դիվանագիտական հարաբերությունների հաստատմամբ Հայաստանի և Հունաստանի միջև ամրապնդվեց կապը Հունաստանի հայ համայնքի և մայր հայրենիքի միջև: Օրինակ՝ Հունաստանի հայ համայնքը նույնպես ակտիվորեն ընդգրկված է և մասնակցում է ՀՀ Սփյուռքի նախարարության կողմից կազմակերպվող «Արի տուն» ծրագրին:
- *Հայաստանից համակարգված և նպատակային օգնություն:* ՀՀ-ն որպես պետություն հիմնականում Սփյուռքի նախարարության միջոցով տարբեր կերպ նպաստում է Հունաստանի հայ համայնքի խնդիրների լուծմանը: Այս առումով կարևոր են դպրոցների համար դասագրքերի պատրաստումը և տրամադրումը, ուսուցիչների վերապատրաստման ծրագրերը և այլն:

Հայ համայնքը՝ որպես գործոն

Լինելով Սփյուռքի ավանդական և կազմակերպված համայնքներից մեկը՝ Հունաստանի հայ համայնքը, չնայած առկա դժվարություններին, նշանակալի գործոն է հանդիսանում Հայության և Հայաստանի համար: Համայնքը, լինելով Հայության անբաժանելի մասը, իր գործունեությամբ նպաստում է համազգային խնդիրների լուծմանը՝ իր հնարավորություններն ի սպաս դնելով համազգային նպատակներին: Այդ գործոնի պահպանումը և զարգացումը լուրջ նշանակություն ունեն Հայության ներուժի համար:

Հունաստանի հայ համայնքը՝ որպես գործոն, Հայության կյանքում դիտարկվում է հետևյալ հարթությունների մեջ.

⁴ Հայոց բանակի կազմավորման տոնն Աթենքում, <http://armchurch.gr/archive.php>

1. *Քաղաքական*: Հունաստանի հայ համայնքի՝ որպես քաղաքական գործոնի, դերը կարևորվում է համազգային հիմնահարցերին (Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման և դատապարտման և արցախյան խնդիրներին) նրա նվիրվածությամբ և պայքարով այդ խնդիրների լուծմանը նպաստելու համար: Այս խնդիրների լուծման ճանապարհը Հունաստանի հայ համայնքի համար լոբբիստական գործունեությունն է: Հայկական լոբբիստական գլխավոր կառույցը Հունաստանում ՀՅԴ Հայ դատի հանձնախումբն է: Դեռևս 1996թ. ՀՅԴ Հայ դատի հանձնախմբի լոբբիստական ջանքերի շնորհիվ Հունաստանի խորհրդարանը ճանաչեց Հայոց ցեղասպանությունը: Սակայն հայ համայնքի համար պայքարը դրանով ավարտված չէ, քանի որ գլխավոր խնդիրը, այն է՝ Հայոց ցեղասպանության ճանաչումը Թուրքիայի կողմից և փոխհատուցումը, դեռևս լուծված չեն: Այս ուղղությամբ էլ շարունակում է պայքարը Հունաստանի հայ համայնքը: Մասնավորապես Թուրքիայի՝ Եվրոպական միությանն անդամակցության խնդրում հայ համայնքն ամեն կերպ փորձում է բարձրացնել Հայոց ցեղասպանության ճանաչման և դատապարտման հարցը: Քանի որ Հունաստանը Եվրամիության անդամ է, ապա նրա դիրքորոշումը վճռական նշանակություն ունի Թուրքիայի անդամակցության հարցում: Հայ համայնքն ակտիվորեն աշխատում է Հունաստանի իշխանությունների հետ այս ուղղությամբ: Այն լուրջ գործոն է ընտրությունների ժամանակ, և Հունաստանի քաղաքական ուժերը չեն կարող հաշվի չառնել նրա դիրքորոշումը տարբեր, այդ թվում նաև՝ արտաքին քաղաքական հարցերում⁵:

Հաջորդ կարևոր համազգային հարցը, որի լուծմանը նպաստելուն են ուղղված Հունաստանի հայ համայնքի ջանքերը, արցախյան հիմնախնդիրն է: Հունաստանի հայ համայնքը փորձում է իր հնարավորությունների սահմաններում նպաստել Ղարաբաղյան հակամարտության խաղաղ և հայանպաստ կարգավորմանը: Այս շրջանակներում ուշագրավ է 2009թ. Ադրբեջանի նախագահ Ի.Ալիևի Հունաստան կատարած այցի ընթացքում Հու-

⁵ *Arevik Badalyan*, նշվ. աշխ:

նաստանի հայ համայնքի կազմակերպած բողոքի ցույցը՝ ընդդեմ Ադրբեյջանի ռազմատենչության և հավակնությունների⁶:

2. *Տնտեսական*: Համայնքը, չնայած տնտեսական ճգնաժամին, ակտիվորեն մասնակցում է նաև հայրենիքի օգնության ծրագրերին՝ հիմնականում Հայաստան համահայկական հիմնադրամի տեղական մասնաճյուղի գործունեության միջոցով: 2011թ. հեռախոսամարաթոնի ընթացքում համայնքը հիմնադրամին նվիրաբերեց մոտ 35 հազ. եվրո⁷:

3. *Քաղաքակրթական*: Հունաստանի հայ համայնքն իր կազմակերպած տարատեսակ մշակութային միջոցառումներով ապահովում է հայկական քաղաքակրթության ներկայությունը Եվրոպայում և մասնավորապես՝ Հունաստանում: Այս առումով նշանակալից է, օրինակ, 2011թ. դեկտեմբերի 28-ին ՀՀ դեսպանությունում բացված հայկական հնատիպ գրքերի և Հայաստանին վերաբերող վիմանկարների ցուցահանդեսը՝ նվիրված հայկական տպագրության 500-ամյակին⁸:

⁶ Տե՛ս Azeri President met with angry Armenian protesters in Greece

<http://www.panarmenian.net/eng/world/news/28661/>

⁷ Панъевропейский телефонный марафон Всеармянского фонда «Айастан», зарегистрировал согласие абонентов пожертвовать 1 миллион 350 000 евро

<http://himnadram.org/index.php?id=23817&lang=3>

⁸ Տե՛ս Հունաստանում ՀՀ դեսպանությունում բացվել է հայ գրատպության 500-ամյակին նվիրված ցուցահանդեսը <http://www.tert.am/am/news/2011/12/29/ingreecearmenianembassy/>

ՖՐԱՆՍԻԱՅԻ ՀԱՅ ԱՎԵՏԱՐԱՆԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԸ

Տիգրան Ղանայանյան՝

Ֆրանսիայում հայ առաքելական և կաթողիկե համայնքների կողքին գոյություն ունի նաև հայ ավետարանական համայնք: Հայ ավետարանականների հաստատումը Ֆրանսիայում պայմանավորված է այն նույն գործոններով, որոնք առկա են Հայության մյուս հատվածների պարագայում: Ֆրանսիայում այդ համայնքի ձևավորման խնդիրն օրակարգային դարձավ 1920-ական թթ., երբ բազմահազար արևմտահայերի ճակատագրին արժանացած բազմաթիվ հայ ավետարանականներ հայտնվեցին Ֆրանսիայում:

Ֆրանսիայի Հայ ավետարանական համայնքի ձևավորումը

Ֆրանսիայի Հայ ավետարանական համայնքը ձևավորվեց 1920-ական թթ.: Վերապատվելիներ ժողովք Պարսումյանը, Հովհաննես Ղազարոսյանը և Գրիգոր Խայիկյանը համարվում են այս համայնքի հիմնադիրները Ֆրանսիայում:

Ֆրանսահայ Ավետարանական եկեղեցին ակտիվորեն մասնակցում է Ֆրանսիայի հայ համայնքի կյանքին, համագործակցում է այլ քրիստոնեական եկեղեցիների, մասնավորապես՝ Ֆրանսիայի այլ ավետարանական եկեղեցիների հետ: Այն սերտ կապեր է պահպանում Հայ Առաքելական և Կաթողիկե, ինչպես նաև այլ կաթոլիկ և ուղղափառ եկեղեցիների հետ: Ֆրանսիայի Հայ Ավետարանական եկեղեցին մաս է կազմում Հայ ավետարանական համաշխարհային խորհրդի¹:

Համայնքի պատմության մեջ կարևոր դերակատարություն է ունեցել վեր. Հովհաննես Ղազարոսյանը (1888-1963): Նա 1927-1941թթ. եղել է Ֆրանսիայի հայ ավետարանական եկեղեցիների միության (ՖՀԱԵՄ) նա-

¹ «Նորավանք» ԳԿՀ Հայագիտական կենտրոնի փորձագետ:

¹ Տե՛ս «Բանբեր», 2006, հունվար-փետրվար:

խագահը², Ֆրանսիայում հայ ավետարանական կառույցների գործունեության գլխավոր հիմնադիրներից ու կազմակերպիչներից մեկը: 1941 թվականից 13 տարի շարունակ միությունը նախագահել է վեր. Գրիգոր Խայիկյանը (1884-1967): Ֆրանսահայ ավետարանական համայնքի ամենանշանավոր ներկայացուցիչներից է վեր. Սամվել Պազգայանը (1908-1987), որը 1967-1976թթ. Վարել է ՖՀԱԵՄ նախագահի պաշտոնը: Վերջինս մեծ ջանքեր ներդրեց տարբեր երկրների համայնքների միջև հարաբերությունների զարգացման գործում: Վեր. Ռընե Լևոնյանը մեծածավալ գործունեություն է ծավալել ինչպես Ֆրանսիայի համայնքում, այնպես էլ Հայաստանում, գլխավորել է «Հույս Հայաստանի համար» կազմակերպության գործունեությունը, այժմ Հայ ավետարանական համաշխարհային խորհրդի փոխնախագահն է:

Ֆրանսիայի հայ ավետարանական համայնքի թվաքանակը և կառույցները

Ֆրանսիայում հայ ավետարանականների թվաքանակի մասին առաջին տեղեկությունները վերաբերում են 1920-ական թթ: Մասնավորապես, Լիոնի հայ ավետարանականների թիվը 1920-ական թթ. կեսերին կազմում էր մոտ հարյուր հոգի³: 1938թ. Ֆրանսիայում հայ ավետարանականների ընդհանուր թվաքանակը հասնում էր մոտ 3 հազարի (15 կենտրոններում), գործում էին 15 քարոզիչներ⁴: 2003թ. Ֆրանսիայում (հայերի թիվը մոտ 450 հազար) բնակվող հայ ավետարանականների թվաքանակը հասնում էր 5 հազարի, որից 600-ը՝ Իսի լը Մուլինոյում⁵:

Ֆրանսիայում գործում են 12 հայ ավետարանական եկեղեցիներ, որոնցից երեքը՝ Մարսելում, մեկական՝ Փարիզում, Լիոնում, Իսի լը Մուլինոյում, Ալֆորվիլում, Առնուվիլ լը Գոնեսում, Վալանսում, Դեսինում, Մոնտելիմարում, Օբենաում: Ֆրանսիայում են գտնվում նաև Քրիստոնեական կրթության կենտրոնը (Վալանս), «Հույս Հայաստանի համար» կազմա-

² Նույն տեղում, 1960, N 11:

³ Նույն տեղում, 1927, N 1:

⁴ Տե՛ս *Ատանալեան Գ.Պ.*, Յուշարձան Հայ Աւետարանականաց եւ Աւետարանական եկեղեցւոյ, Ֆրեզնո, 1952, էջ 410:

⁵ Տե՛ս «Հայ Միլոնոք» հանրագիտարան, Երևան, 2003, էջ 628-629, 637:

կերպությունը (Մարսել), «Լա Ֆոնթանել» (Մարսել) և «Լա Սուրս» (Լիոն) կենտրոն-ճամբարները, «Աշնան ծաղիկ» ծերանոցը (Դեսինում), Ֆրանսահայ Քրիստոնյա երիտասարդների միությունը (Լիոն), «Բանբեր» ամսագիրը (հայերեն)՝ Մարսելում և «Լյումինյոն» ամսագիրը (ֆրանսերեն)՝ Լիոնում⁶: Բացի այդ, գործում են երկու մշակութային կենտրոններ՝ «Անի» (Բոմոն) և «Մարկոսյան-Վեքիլյան» (Սենթ Անտուան): Ֆրանսիայի հայ ավետարանական համայնքի կարևորագույն կառույցը, բնականաբար, Ֆրանսիայի հայ ավետարանական եկեղեցիների միությունն է:

Ֆրանսիայի հայ ավետարանական եկեղեցիների միությունը

Ֆրանսիայի հայ ավետարանական համայնքի բնականոն գործունեության ծավալման մեջ կարևորագույն նշանակություն ունի Ֆրանսիայի հայ ավետարանական եկեղեցիների միությունը, որը համակարգում է այս երկրի հայ ավետարանական բոլոր կառույցների գործունեությունը:

ՖՀԱԵՄ առաջին ժողովը գումարվել է 1927թ. սեպտեմբերի 24-28-ը Լիոնում: Ժողովներ գումարվել են յուրաքանչյուր տարի, բացառությամբ՝ 1939-1940 և 1943-1944 թվականների: Ֆրանսիայի կառավարությունը ՖՀԱԵՄ-ը ճանաչել է միայն 1946թ.⁷:

Ներկայում ՖՀԱԵՄ-ը ղեկավարվում է միության ժողովի կողմից, որը գումարվում է տարին մեկ: Ժողովն ընտրում է Կենտրոնական մարմին, որը ղեկավարում է միության գործունեությունը ժողովների միջև ընկած ժամանակահատվածում: Այն բաղկացած է ութ անդամներից՝ նախագահ (ընտրված հովիվներից), երեք հովիվ պատվիրակներ (ընտրված միության ժողովի կողմից), ՖՀԱԵՄ գանձապահ (ընտրված միության կողմից), երեք աշխարհական պատվիրակներ (ընտրված յուրաքանչյուրն իր շրջանի եկեղեցիների հոգաբարձության կողմից):

ՖՀԱԵՄ-ն ունի պաշտոնական ամսագիր՝ «Բանբերը», որը հիմնադրվել է 1925թ.: Ներկայումս խմբագիրն է Ժիլյեր Լևոնյանը: Կարևոր նշանակություն ունի այն, որ «Բանբեր» ամսագիրը մշտապես մեծ ուշադրություն

⁶ Տե՛ս AMAA Directory 2011: Armenian Evangelical Churches, Institutions, Organizations, Pastors and Christian Workers Worldwide, p. 11-12.

⁷ Տե՛ս «Բանբեր», 1980, N 9:

է դարձնում համահայկական խնդիրներին, ազգային պատմությանը, մշակույթին, հայապահպանության խնդիրներին Սփյուռքում:

Կրթական, մշակութային և բարեգործական կազմակերպությունները

Համայնքի ձևավորման պահից ավետարանական եկեղեցին ձեռնամուխ եղավ կրթական գործին: Դեռևս 1938թ. հայ ավետարանական կիրակնօրյա դպրոցներում սովորողների թիվը հասնում էր 1200-ի: Պետք է նշել, որ այս դպրոցներում սովորում էին ոչ միայն ավետարանական հայերը, այլև մյուս հարանվանությունների ներկայացուցիչները: Երկրորդ աշխարհամարտին հաջորդած տարիներին Մարսելի երեք թաղամասերում գործող երեք եկեղեցիներին կից գործել են կիրակնօրյա դպրոցներ, յուրաքանչյուրը՝ 50-70 աշակերտով⁸:

Կարևորելով կրթական և երիտասարդական խնդիրները՝ ՖՅԱԵՄ երիտասարդաց կենտրոնական վարչությունը կազմակերպում է ճամբարներ և զանազան հավաքներ:

1987թ. նոյեմբերին վեր. Դանիել Սահակյանի ջանքերով Մարսելի Բոմոն թաղամասում հիմնադրվեց «Անի» մշակութային կենտրոնը, որը 2007թ. մեծ շուքով նշեց հիմնադրման 20-ամյակը: 20-ամյակին նվիրված գլխավոր երեկույթին, որը տեղի ունեցավ նոյեմբերի 30-ին, ներկա էին նաև Հայ Առաքելական և Հայ Կաթողիկե եկեղեցիների ներկայացուցիչներ⁹:

1988թ. դեկտեմբերի 7-ից մինչև 1994թ. մայիսի 31-ը գործել է «SOS Արմենի» բարեգործական կազմակերպությունը, որի աշխատանքներին մասնակցել են Առաքելական, Կաթոլիկ և Ավետարանական եկեղեցիները¹⁰: Այս կառույցը կազմակերպել է նշանակալի օգնություն աղետի գոտուն:

«Հույս Հայաստանի համար» կազմակերպությունն ակտիվ գործունեություն է ծավալել ՀՀ-ում և Արցախում, մասնավորապես՝ երկրաշարժից տուժած գոտիների բնակիչներին օգնելու ուղղությամբ, ինչպես նաև իրականացրել է այլ բարեսիրական գործունեություն: «Հույս Հայաստանի համար» կազմակերպությունը համագործակցում է Ամերիկայի Հայ ավետարանական ընկերակցության հետ:

⁸ Տե՛ս *Ստանալեան Կ. Պ.*, նշվ. աշխ., էջ 410, 413:

⁹ Տե՛ս «Բանբեր», 2008, հունվար-փետրվար:

¹⁰ Նույն տեղում, 2009, օգոստոս-սեպտեմբեր-հոկտեմբեր:

Համագործակցությունը մյուս հայ ավետարանական համայնքների հետ

Ֆրանսիայի հայ ավետարանական համայնքը եղել և շարունակում է մնալ հայ ավետարանականության կարևոր կենտրոններից մեկը: ՖՀԱԵՄ-ը կարևոր դերակատարություն ունի ինչպես ամբողջ Հայ Ավետարանական եկեղեցում, այնպես էլ Ֆրանսիայի հայ համայնքում: Առանձնապես կարևորվում է Ֆրանսիայի հայ ավետարանական համայնքի ներկայացուցիչների ակտիվ համագործակցությունը Սփյուռքի և Հայաստանի մյուս հայ ավետարանական համայնքների հետ:

Համայնքի կարևորությունն է ընդգծում այն հանգամանքը, որ 1965թ. հոկտեմբերի 13-16-ը հենց Փարիզում առաջին անգամ գումարվեց Հայ ավետարանական միջմիութենական խորհուրդը, որի նպատակն էր քննարկել Սփյուռքի Հայ ավետարանական եկեղեցիների առջև ծառայած մարտահրավերները: Ժողովի բացառիկությունն այն էր, որ ներկայացված էին Սփյուռքի բոլոր Հայ Ավետարանական եկեղեցիները¹¹:

1981թ. Փարիզում կայացավ Հայ ավետարանական համաշխարհային խորհրդի (ՀԱՀԽ) անդրանիկ ժողովը: Այս իրադարձությունը կրկին պատահական չէր, որ կայացավ Ֆրանսիայում, որի հայ ավետարանական համայնքն ամենակազմակերպվածներից էր: Մասնավորապես, մեծ է դրա նշանակությունն աշխարհի տարբեր մասերում գտնվող հայ ավետարանականների միավորման գործում: 1987թ. հոկտեմբերի 12-14-ը Փենսիլվանիայում կայացած ՀԱՀԽ երկրորդ ժողովում նախագահ ընտրվեց ՖՀԱԵՄ նախագահ Դ.Սահակյանը¹²:

Ներկայումս, բացի ՀԱՀԽ փոխնախագահ Ռընե Լևոնյանից, այդ խորհրդի կազմում են Եվրոպայի հայ ավետարանական եղբայրության նախագահ Ժիլպեր Լևոնյանը և ՖՀԱԵՄ նախագահ Ջոել Միքայելյանը¹³:

1996թ. ամռանը Իսի լը Մուլինոյում կայացան Հայ Ավետարանական եկեղեցու 150-ամյակին նվիրված միջմիութենական համագումարը և հա-

¹¹ Նույն տեղում, 1967, N 5:

¹² Նույն տեղում, 1988, N 3:

¹³ Տե՛ս AMAA Directory 2011: Armenian Evangelical Churches, Institutions, Organizations, Pastors and Christian Workers Worldwide, p. 3-4.

մաշխարհային տոնակատարություն: Այստեղ էին ժամանել 18 երկրների Հայ Ավետարանական եկեղեցիների 600 ներկայացուցիչներ:

Առանձնակի նշանակություն ունի Ֆրանսիայի հայ ավետարանական համայնքի համագործակցությունն Ամերիկայի Հայ ավետարանական ընկերակցության հետ: Վերջինիս գործունեությունը Ֆրանսիայում հիմնականում հետևյալն է. «Բանբեր» և «Լյումինյոն» հրատարակություններին ֆինանսական աջակցության ցուցաբերում, հովիվների և դասատուների աշխատանքին օժանդակություն, ՖՀԱԵՄ գործունեությանն աջակցություն, եկեղեցիների և ճամբարների վերանորոգում, աջակցություն «Լա Ֆոնթանել» և «Լա Մուրս» քրիստոնեական ճամբարներին, Եվրոպայի Հայ ավետարանական եղբայրության գործունեությանն օժանդակում¹⁴, քրիստոնեական գրականության տարածում:

ՖՀԱԵՄ-ը մեծածավալ միախոնրական գործունեություն է ծավալել տարբեր համայնքներում: Այն կենտրոնական դեր է կատարում նաև 1998թ. մայիսին Իսի լը Մուլինոյում հիմնադրված Եվրոպայի հայ ավետարանական եղբայրությունում: Եղբայրության անդամ են Ֆրանսիայի, Բելգիայի, Բուլղարիայի, Հունաստանի, Թուրքիայի Հայ Ավետարանական եկեղեցիները: Եղբայրությունը գործունեություն է ծավալում նաև Գերմանիայում և Հոլանդիայում: Հայաստանից արտագաղթի արդյունքում գործունեության նոր դաշտ է նախանշվում Անգլիայում, Շվեդիայում, Իսպանիայում, Լեհաստանում¹⁵: Եվրոպայի հայ ավետարանական եղբայրության նախագահն է Ժ.Լևոնյանը:

Հարաբերությունները Հայաստանյայց Առաքելական սուրբ եկեղեցու հետ

Կարևոր նշանակություն ունի ինչպես ընդհանրապես Հայաստանյայց Ավետարանական եկեղեցու համագործակցությունը Հայաստանյայց Առաքելական սուրբ եկեղեցու, այնպես էլ ավետարանական եկեղեցու՝ տարբեր երկրներում գտնվող կառույցների համագործակցությունը Ս.Էջմիածնի

¹⁴ Տե՛ս "AMAA news", 2006, N 1.

¹⁵ Տե՛ս «Բանբեր», 2006, հունվար-փետրվար:

հետ: Այդպիսի համագործակցության օրինակ է վեր. Գ. Խայիկյանին ուղղված Ս.Էջմիածնի հոգևոր ճեմարանի վերատեսուչ Հայկազուն արքեպիսկոպոս Աբրահամյանի նամակը՝ գրված Վեհափառ հայրապետի կարգադրությամբ: Այստեղ, մասնավորապես, ճեմարանի տեսուչը շնորհակալություն է հայտնում Գ.Խայիկյանին հարյուր կտոր Սուրբ գրքեր ուղարկելու: Հայկազուն արք. Աբրահամյանն ընդգծում է իրենց ուսանողների համար Խայիկյանի կարդացած դասախոսության օգտակարությունը և կրկին հրավիրում Ս.Էջմիածին¹⁶: Ինչպես տեսնում ենք, հայ ավետարանականներն օգնում են լրացնել Ս.Էջմիածնին հոգևոր գրականության պահանջարկը:

1965թ. առաջին անգամ հրավիրված Հայ ավետարանական միջմիութենական խորհուրդը բազմաթիվ հարցերի շարքում քննարկեց նաև «...Մայրենի եկեղեցին հետ մեր փոխարաբերութեան կամ միութեան հարցը»¹⁷:

ՖՀԱԵՄ 50-ամյակի կապակցությամբ հայ ավետարանական, «Բանբեր» ամսագրի աշխատակից Շահեն Մարակյանը, գնահատելով Հայ Ավետարանական եկեղեցու դերը հայության մեջ, գրում է. «...Մեր սրտագին փափաքն է, որ Միութեան Ժողովներու այս Յիսնամեակը դառնայ ՆՈՐ ԱՐԹՆՈՒԹԵԱՆ ՈՒ ՏԵՄԻԼՔԻ ՇՐՋԱՆ մը, որ կարենանք մեր պարտականութիւնը կատարել հայ ժողովուրդի զաւակներուն հանդէպ: Եթէ կուսակցութիւնները՝ կոչուած են ազգին շահը պաշտպանելու, բարեսիրական հաստատութիւնները՝ անոր աղքատներին ու անկեալները հոգալու, Առաքելական Մայր եկեղեցին՝ հայութեան բերդը դառնալու, Աւետարանականներուս կոչումն ալ Աւետարանին հոգին եւ լոյսը վառ պահելն է մեր ժողովուրդին մէջ»¹⁸:

Այստեղ կարևոր նշանակություն ունի այն հանգամանքը, որ Հայ Ավետարանական եկեղեցին դիտարկվում է որպես համայն Հայության բաղկացուցիչ և անբաժանելի մաս: Ընդգծվում է Առաքելական եկեղեցու «Մայր» և «հայության բերդ» լինելը, ինչը ողջունելի է փոխադարձ հանդուրժողականության, համագործակցության ու միասնականության համատեքստում:

¹⁶ Նույն տեղում, 1962, N 5:

¹⁷ Նույն տեղում, 1967, N 5:

¹⁸ Նույն տեղում, 1980, N 9:

Այսպիսով, Ֆրանսիայի հայ ավետարանական համայնքը կազմում է Ֆրանսիայի հայ համայնքի մի մասնիկը: Չնայած իր թվաքանակի համեմատ ընդգրկմանը (ողջ ֆրանսահայ համայնքի համեմատ), ավետարանական համայնքը ծավալում է ակտիվ եկեղեցական, կրթական, մշակութային, բարեգործական, հրատարակչական գործունեություն: Ֆրանսահայ ավետարանական կառույցները սփյուռքահայ ազգային կառույցների անբաժանելի մասնիկն են, սակայն դրանց առավել սերտ ինտեգրումը համահայկական կառույցներին ունի կարևոր նշանակություն:

**ԹԻՖԼԻՍՅԱՆ ԻՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ.
ՀԱՅ-ՎՐԱՑԱԿԱՆ ՀԱԿԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՁ**

Թամարա Վարդանյան՝

Ներածություն

Անցած տարի Վրաստանում «Ինտերնյուս» կազմակերպությունն անցկացրել էր հանդուրժողականության և մարդու իրավունքների խնդիրների ուսումնասիրման շրջանակներում տեղի տպագիր լրատվամիջոցների մոնիթորինգ: Ուսումնասիրված էին էթնիկ և կրոնական (նաև սեռական) փոքրամասնությունների վերաբերյալ մամուլում հայտնված նյութերի քանակն ու բովանդակությունը: Արդյունքում՝ պարզվել էր, որ փոքրամասնություններին նվիրված հոդվածների շարքում աստելությամբ լցված նյութերի ընդհանուր քանակը գերազանցում էր դրական և չեզոք-տեղեկատվական բնույթի նյութերը, ինչն էլ փաստում է երկրում հասարակական անհանդուրժողականության բարձր մակարդակի մասին:

Անդրադառնանք էթնիկ և կրոնական փոքրամասնություններին նվիրված տվյալներին: Էթնիկ փոքրամասնությունների վերաբերյալ Վրաստանի տպագիր մամուլում հրապարակված նյութերի վերլուծությունը ցույց է տալիս, որ դրանց 43%-ն ունի բացասական երանգավորում և ընդամենը 13%-ն է դրական երանգավորմամբ (44%-ը՝ չեզոք)¹:

Թեև հայտնի է, որ վրաց հասարակությունում լեզվական ազգայնականությունը բավական խոր արմատներ ունի, սակայն պատմական այս փուլում նկատենք, որ այն զիջում է ազգայնականության կրոնական բաղադրիչին: Այդ մասին են վկայում նաև թվերը: Այսպես՝ վրաց հասարակու-

¹ «Նորավանք» ԳԿՀ Հայագիտական կենտրոնի փորձագետ, պ.գ.թ.:

¹ *Tabagari Giorgi, Chachua Diana, Monitoring of Media Coverage Ethnic, Religious and Sexual Minorities in Georgian Printed Media*, Internews Georgia, 1 May 2011 – 31 July 2011.

թյունն էլ ավելի անհանդուրժողական է կրոնական փոքրամասնությունների նկատմամբ: Վերջիններիս նվիրված հոդվածների 54%-ն ունի բացասական երանգավորում, չեզոք է 40%-ը և ընդամենը 6%-ը՝ դրական:

Առավել ուշագրավ են տվյալներն ըստ էթնիկ խմբերի: Տպագիր մամուլում հրապարակված տեղեկատվության գերակշռող մասը՝ 60%-ը, նվիրված է հայերին: Ընդ որում, արխագներին, որոնց հետ վրացիներին հաջողվել է միայն անկախության տարիներին երկու անգամ պատերազմել, նվիրված է հոդվածների ընդամենը 11%-ը: Մնացած տվյալները բաշխվում են այսպես. ադրբեջանցիներ՝ 7%, թուրք-մեսիսեթցիներ՝ 7%, օսեր՝ 5% և այլն: Հայերն ամենահաճախն են հիշատակվում նաև որպես կրոնական փոքրամասնություն՝ 47%, այն դեպքում, երբ մահմեդականները՝ 24%²:

Հակահայկականության ֆենոմենը

Դատելով տվյալներից՝ վրաց հասարակության ուշադրության կիզակետում են գտնվում հատկապես հայերը: Վրացական ազգայնականության հակահայկական բաղադրիչը որևէ կերպ տեղը չի զիջում այլ ազգերի հետ առկա հակասություններին նույնիսկ այն պայմաններում, երբ.

ա) արխագների և օսերի հետ ունեցած հակամարտության և պատերազմների արդյունքում Վրաստանն ունեցավ զգալի տարածքային, մարդկային ու տնտեսական ներուժի կորուստ,

բ) ադրբեջանցիների շրջանում բարձր ծնելիության պայմաններում, վերջիններս քանակապես զբաղեցնում են առաջին տեղն ազգային փոքրամասնությունների շարքում: Նշենք, որ մինչ 2002թ. մարդահամարն առաջին տեղը զբաղեցնում էին հայերը:

Սակայն Վրաստանում հայերի հանդեպ բացասական տրամադրություններ տարածող նյութերն իրենց քանակով և ծայրահեղությամբ ստվերում են թողնում մնացած փոքրամասնությունների հետ առկա խնդիրները: Ինչն² է հայկական գործոնն առավել անհանգստացնում վրաց հասարակությանը: Առաջին հայացքից զարմանալի թվացող այս ֆենոմենն իր բացատրությունն ունի: Միջէթնիկ հարաբերությունների ձևավորման կամ վե-

² Նույն տեղում:

րաձևավորման գործում մեծ է պատմական հիշողության դերը: Այս կամ այն ազգի ավանդական ընկալումներում մրցակցի (թշնամու, դաշնակցի) կերպարը, որպես կանոն, դանդաղ է վերափոխվում: Ցավոք, վրաց ազգայնական մտածողությունը հայերին ընկալում է որպես իրենց հիմնական մրցակիցը, և այս մոտեցումն արդեն ավանդական է դարձել: Այն ձևավորվել է դեռևս 19-րդ դ. վերջին - 20-րդ դարի սկզբին և կարծրացել 1918-1919թթ. հայ-վրացական կարճատև պատերազմի տարիներին, որը միակն էր երկու ազգերի երկար պատմության ընթացքում:

Հայ-վրացական հակասությունների ակունքները

Դեռևս 19-րդ դ. վերջին – 20-րդ դ. սկզբին Ռուսաստանում կապիտալիստական հարաբերությունների զարգացմանը զուգընթաց՝ լուրջ տեղաշարժեր էին տեղի ունենում ոչ միայն սոցիալ-տնտեսական ոլորտում, այլև միջէթնիկ հարաբերություններում:

Մինչ կապիտալիզմի զարգացումը, վրաց ազնվականության դիրքերն Այսրկովկասում բավական ամուր էին, սակայն կապիտալիզմի զարգացման արդյունքում դրանք սկսեցին խարխուլվել: Իսկ հայերի համար նոր պայմանները բավական նպաստավոր էին: Ի տարբերություն վրացիների ու թաթարների, հայերին հաջողվեց արագ ներգրավվել զարգացող առևտրաարդյունաբերական հարաբերություններում: Ընթանում էին տեղաշարժեր գյուղերից դեպի խոշոր քաղաքներ, որտեղ նպաստավոր պայմաններ կային առևտրով ու արտադրությամբ զբաղվելու համար: Հայ քաղաքաբնակները շատ արագ աճեցին ու հզորացան՝ ձևավորելով բուրժուական դասակարգ: Սակայն հայկական կապիտալն իր արմատներն էր գցում, ցավոք, ոչ թե Երևանում, Կարսում, Ալեքսանդրապոլում, այլ գերազանցապես Թիֆլիսում, Բաքվում, մասամբ նաև Բաթումում:

Հայերի առավել, իսկ վրացիների ու թաթարների՝ պակաս ներգրավվածությունը կապիտալիստական հարաբերություններում բացատրվում է նրանով, որ զարգացող առևտրաարդյունաբերական ոլորտում ընդգրկվում էին, բնականաբար, ոչ թե վրացի ու թաթար ունևոր կալվածատերերը, որոնք տիրում էին խոշոր կալվածքների և չէին կարող արագ բաժանվել

դրանցից ու տեղափոխվել քաղաք, այլ հողագուրկ հայերը: Դարասկզբին վրացիների շրջանում տոհմիկ ազնվականների խավը, որն էլ տիրում էր մեծաթիվ կավածքների, կազմում էր Կովկասի ամբողջ ազնվականության 41.53%-ը, թուրք-թաթարների՝ 27.5%, իսկ հայերի շրջանում այս դասը կազմում էր ընդամենը 5.46%³: Այսինքն՝ Կովկասում ապրող տոհմիկ ազնվականների 2/5-ից ավելին կազմում էին վրացիները:

Այսպես, Այսրկովկասի առևտրաարդյունաբերական ոլորտում վրացիների և թաթարների կրավորականության պատճառով առաջացած պահանջարկը հիմնականում լրացվեց հողագուրկ հայերով, որոնց համար առևտուրն ու արդյունաբերությունն ապրուստի, թերևս, միակ միջոցն էին: Բացի այդ, հայերը, ապրելով քաղաքակրթությունների և առևտրական ճանապարհների խաչմերուկներում, հնուց ի վեր զբաղվում էին առևտրով և հայտնի էին այդ ասպարեզում իրենց ունեցած հաջողություններով: Նրանց հաջողվում էր տարանցիկ առևտրական ուղիներով կապել ոչ միայն Արևելքն Արևմուտքի, այլև Հյուսիսը Հարավի հետ: Հայկական լեռնաշխարհի աշխարհագրական դիրքը, առևտրական ճանապարհների խաչմերուկներում լինելը որոշակիորեն նպաստել են հայերի մեջ այնպիսի հատկությունների ձևավորմանը, ինչպիսիք են շարժունակությունը, առևտրական ունակություններին ու հմտություններին տիրապետելը, օտար վայրերում, այլ ժողովուրդների միջավայրում արագ հարմարվելու կարողությունը, ճկունությունը, լեզուների իմացությունը և այլն:

***Վրաց ազնվականության սնանկացումն ու
հայկական կապիտալի հզորացումը***

Հայտնի է, որ ազնվականությունը ցարիզմի հասարակական հենարանն է, և ցարիզմն էլ մի շարք միջոցառումներով ձգտում էր սատարել նրան: Այսպես, Կովկասի փոխարքա Մ.Ս. Վորոնցովը 1844թ. հիմնեց Հասարակական խնամակալության Այսրկովկասի վարչություն (Պրիկազ), որի նպատակն էր վրաց ազնվականներին բավական ցածր տոկոսներով վարկավոր-

³ Բշխանյան Բ., «Կովկասյան ժողովուրդների ազգաբնակչության կազմը, պրոֆեսիոնալ խմբավորումը», Թիֆլիս, 1904, էջ 192:

րելը⁴: Վրաց իշխաններն ու ազնվականներն իրենց կալվածքները շտապեցին ներդնել այդ վարչությունում, իսկ փոխարենը ստանալով վարկային գումարներ՝ փոխանակ ներդնելու և նպաստելու տնտեսության զարգացմանը, սկսեցին շռայլորեն ու անիմաստ վատնել այն: Նրանք, տարիների ընթացքում մեծ պարտքեր կուտակելով, բնականաբար, կախման մեջ ընկան փոխարքայից և իշխանություններից: Վերջիններս էլ պետական գանձարանի հաշվին մի քանի անգամ տարածամկետ վճարումներ սահմանեցին կամ էլ ուղղակի վերացրին այդ պարտքերը: Բայց այդ անհոգ տարիները երկար չտևեցին, քանի որ վերոնշյալ վարչությունը լուծարվեց, իսկ փոխարենը ստեղծվեցին բազմաթիվ վարկային ընկերություններ, որոնք այլևս բարեհոգաբար զիջումներ չէին կատարում պարտատու վրաց ազնվականներին: Այդ ժամանակ վրաց ունևոր հողատերերի տնտեսական կացությունը նկատելիորեն վատացավ: Նրանց պարտքը դրամատնային հաստատություններին, ըստ պաշտոնական տվյալների, կազմում էր ներդրած կալվածքների 80%-ը, իմերեթ հողատերերինը՝ 55%-ը⁵: Իսկ հայ առևտրականներն ու արդյունաբերողներն այդ ընթացքում արդեն հասցրել էին իրենց ձեռքում կուտակել զգալի դրամական միջոցներ, և ցանկանում էին դրանք վերածել կապիտալի: Այսպես սկսվեց վրաց հողատերերի սնանկացման և հայերի կողմից Թիֆլիսի նահանգում հողային տարածքների ձեռքբերման գործընթացը: Վրաց սնանկացող հողատերերը դիմեցին հայ կապիտալիստներին տոկոսով դրամական միջոցներ տրամադրելու խնդրանքով, ինչն էլ համընկնում էր հայերի՝ իրենց դրամական միջոցները բազմապատկելու ցանկություններին: Հետզհետե վրաց ազնվականների պարտքն ավելանում էր, քանի որ այդ տոկոսային վճարումները նկատելիորեն դժվար էր կատարել այն պայմաններում, երբ 1861թ. ճորտատիրական իրավունքի վերացման հետևանքով հողատերերը զրկվել էին գյուղացիներին լայնորեն շահագործելու հնարավորությունից: Մեծաթիվ վրացական և իմերեթական կալվածքներ գրավ էին դրվում հայ դրամատերերին, և արդ-

⁴ *Н.Н. М-ко*, «Грузино-армянские претензии и Закавказская революция», Киев, 1906, էջ 7 (*Ն.Ն. Մ-կո*, «Հայ-վրացական դժգոհությունները և անդրկովկասյան հեղափոխությունը», Կիև, 1906):

⁵ Նույն տեղում, էջ 8:

յունքում՝ վրաց ազնվականների ու իշխանների մեծ մասն ունեզրկվում էր: Այսպես, Կախեթում խաղողի այգիների մեծ մասը գրավ էր դրված հայ դրամատերերին, որոնք բերքի ստացման համար գալիս էին Թելավի (Իմերեթիայի գլխավոր քաղաքը) և տնօրինում ստացված եկամուտը⁶:

Այս գործընթացների մասին Բ.Իշխանյանը գրում է. «Այն, ինչ Ռուսաստանում և մասնաւորապէս Կովկասում չի կատարուել քաղաքականօրէն՝ վերացում կամ նուազեցում ազնուական դասի մեծ, աւելորդ բանակի, դա կատարում է ինքնաբերաբար տնտեսական կռուի հողի վրա. միջնադարեան բնական տնտեսութեան ոսկրացած ներկայացուցիչները պէտք է բնանհրաժեշտօրէն տեղի տային տեխնիքական ինդուստրիայի նուաճողական ընթացքի առաջ»⁷:

Այսպիսով, հայ ունեւորների շրջանում կապիտալի կուտակումն իրականացվում էր վրաց հողատերերի սնանկացմանը զուգահեռ և մասամբ նաև դրա հաշվին:

Հակահայկականության դրսևորումները

Նշված պատմական ժամանակահատվածում վրացիների շրջանում սկսեց տարածվել այն տեսակետը, թե իրենց դիրքերի թուլացումը պայմանավորված է առևտրով զբաղվող հայերի հաջողություններով, որոնք, տնտեսապես հզորանալով, իրենց ձեռքում կուտակեցին զգալի ֆինանսական դրամագլուխ, ինչն էլ հնարավորություն էր տալիս նրանց գնելու վրաց ազնվականների քայքայվող տնտեսությունները: Նշենք, որ հայերին հաջողվել էր նաև որոշակի բարձր դիրք գրավել Թիֆլիսի քաղաքային կառավարման համակարգում (քաղաքային դումա):

Այդ շրջանում վրաց ազնվականության ազգայնական հատվածը սկսեց ամեն առիթ օգտագործել՝ հասարակության շրջանում հակահայկական տրամադրություններ տարածելու նպատակով: Այդ դժգոհությունները լայն արձագանք գտան տեղական մամուլում:

⁶ Նույն տեղում, էջ 9:

⁷ Իշխանյան Բ., նշվ. աշխ., էջ 193:

19-րդ դ. վերջին – 20-րդ դ. սկզբին Թիֆլիսում հրատարակվում էին անթաքույց հակահայկական ուղղվածությամբ լրագրեր՝ վրացալեզու «Ցնոբիս Փուրցելի»-ն («Տեղեկությունների թերթիկ»), «Ախալի Դրոեբա»-ն («Նոր ժամանակ»), ռուսալեզու «Իվերիա»-ն, «Կավկազ»-ը, որոնք հակակրանք էին տարածում հայերի հանդեպ՝ նրանց մեղադրելով վրացիների տնտեսական անկման մեջ: Էթնիկ հոգեբանության ժամանակակից ուսումնասիրողներից Գ.Ու. Մալդաստովան նշում է, որ ճգնաժամային պայմաններում գործում են «սոցիալական ընկալումների մի շարք մեխանիզմներ, որոնցից է, օրինակ, սեփական խմբի թերությունների և անհաջողությունների պայմանավորումն արտաքին գործոններով... տնտեսական, սոցիալական ոլորտներում սեփական անհաջողությունների մեղքի և պատասխանատվության բարդումն այլ էթնիկ խմբի վրա»⁸:

Նմանատիպ իրավիճակ էր ստեղծվել 20-րդ դարի սկզբին վրաց հասարակության շրջանում: «Ցնոբիս Փուրցելի» (1886-1906) թերթի խմբագիր Վ.Գունիան՝ հայտնի իր հակահայկական հոդվածներով, ռուսալեզու «Կավկազ»-ում գրում էր. «Ոչ մեկի համար գաղտնիք չէ... որ վերջին 1,5-2 տասնյակ տարիների ընթացքում հայերը պարբերաբար քշում էին վրացիներին քաղաքային ինքնավարությունից... Վրացական մամուլը հնարավորության սահմաններում անընդհատ մատնանշում էր ոչ բնականոն կացությունը՝ հայերի գերակշռությունը Վրաստանի հինավուրց մայրաքաղաքում և դումայի անարդար վերաբերմունքը վրացիների հանդեպ»⁹:

Դժվար է սահման դնել և որոշել, թե արդյոք մամուլն էր արտահայտում վրաց հասարակության կարծիքը, թե ընդհակառակը՝ ձգտում էր ձևավորել այն: Այնուամենայնիվ, ակնհայտ է, որ հայ-վրացական հակասությունները խորացնել ձգտող ու թշնամանք սերմանող այդ հրապարակումներն արձագանք չգտան վրաց լայն հասարակայնության շրջանում: Այդ հակասությունները հիմնականում մնացին վերևում՝ մրցակցող վերնախավերի մակարդակում: Ա.Գյուլխանդանյանը, նկարագրելով 1905թ.

⁸ *Солдатова Г.У.*, «Психология межэтнической напряженности» (Գ.Ու. Մալդաստովա, «Ազգամիջյան լարվածության հոգեբանությունը»), Մ., 1998, էջ 160-161:

⁹ «Кавказ» («Կավկազ»), Թիֆլիս, 1897, թիվ 3:

փետրվարին ցարական կառավարության դրդամբ ու տեղի թաթարների կողմից Բաքվում իրականացված հայերի կոտորածը, գրում է. «Նոյն ոճրագործ ձեռքերը Թիֆլիսում սկսած էին թռուցիկներ տարածել, որով զգուշացնում էին վրացիներին, թե հայերը պատրաստում են վրացիներին կոտորել: Այսպիսով, ոչ միայն թաթարներին, այլև վրացիներին հայերի դեմ հանելու աշխատանք էր կատարում: Բարեբախտաբար Թիֆլիսի հայ և վրաց ազգաբնակչությունը լաւ գիտակցում էին, որ թռուցիկների հեղինակը կա՛մ ոստիկանությունն է եւ կա՛մ հասարակական տականքները, որոնց համար ձեռնտու եւ ցանկալի էին հայ-վրացական ընդհարումները»¹⁰:

Փաստորեն, հայ-վրացական ազգամիջյան թշնամանք ու ատելություն սերմանելով՝ Թիֆլիսի հակահայ մամուլը գոնե պատմական այդ փուլում սպասված արդյունքներին չհասավ: Սակայն այն որոշակիորեն կարողացավ վրաց ազգայնականության գաղափարաբանության մեջ արմատավորել ընդգծված հակահայկական բաղադրիչ:

Անփոփում

Այսօրվա իրողությունների հետ զուգահեռներ անցկացնելով՝ նշենք, որ ներկայիս հակահայկական տրամադրությունները վրացական մամուլում նույնպես խորքային պատճառներ չունեն, սակայն անցյալում ձևավորված ավանդույթը, երբ հայերին դիտում էին որպես մրցակից, պահպանվում են մինչ օրս: Անցած դարի սկզբին վրաց ազնվականության տնտեսությունների բնական քայքայումը կապվում էր հայկական կապիտալի հզորացման հետ, սակայն այդ երևույթն ընդամենը տնտեսության զարգացման տրամաբանությանն ու կանոններին համահունչ գործընթաց էր: Այնուամենայնիվ, Թիֆլիսյան վրացալեզու և ռուսալեզու մամուլի մի քանի օրգանների հաջողվում է այդ դժգոհություններն ուղղորդել հակահայկական հունով:

Այժմ էլ Վրաստանի տպագիր մամուլում փոքրամասնությունների վերաբերյալ նյութերի 60%-ը վերաբերում է հայերին, և գերակշիռ հատվածը բացասական տեղեկատվություն է: Այդ լրագիրներն են՝ «Ասավալ-դա-

¹⁰ *Ս. Գյուլիսանյան*, «Հայ-թաթարական ընդհարումները Բազուի մեջ», «Հայրենիք», Բոստոն, 1932, No 1, էջ 126-127:

սավալի», «Ախալի Տաոբա», «Ալիա», «Կվիրիս Խրոնիկա», «Կվիրիս Պալիտրա», «Վերսիա», «Ըեզոնանսի» և այլն: Սակայն, հաշվի առնելով աբխազական, օսական և օր օրի հզորացող ադրբեջանական գործոնները՝ այս իրավիճակը մի կողմից, անշուշտ, անցյալի ավանդույթների, սակայն, մյուս կողմից՝ ներսում որոշակի հակահայ ուժերի նպատակաուղղված գործունեության արդյունք է:

Տեղեկատվական անվտանգություն

ԳԻՏԵԼԻՔԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԱՐԺԵՎՈՐՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Սոնա Մանուսյան*, Աննա Ժամակոչյան**

Հոդվածում ուրվագծվում է սոցիալ-հոգեբանական այն ընդհանուր համատեքստը, որի ներքո Հայաստանում բովանդակություն է ստանում գիտելիքը՝ որպես հանրային արժեք: Համադրված են մեր դիտարկումները և 2011-2012թթ. «ՀՀ տեղեկատվական տարածքի իդեոլոգեմների ուսումնասիրության»¹ շրջանակներում ստացված՝ մեդիաոլորտի փորձագետների և հասարակագետների (15 փորձագետ) գնահատականները ՀՀ-ում և մեր ԶԼՄ դաշտում գիտության-կրթության և մտավորականության գաղափարների վերաբերյալ:

Գիտելիքը՝ որպես հասարակական արժեք

Կրթությունը և զարգացումն արժևորվում են բոլոր հասարակություններում, և սա բխում է ոչ միայն գիտելիքի ձեռքբերման պրագմատիկ նշանակությունից, այլև, առաջին հերթին՝ մարդուն ներհատուկ ճանաչողական պահանջմունքի հիմնարար բնույթից: Առնվազն այս երկու հանգամանքները թույլ են տալիս գիտելիքի և կրթության մասին խոսել որպես արժեքներ հանրային գիտակցության մեջ: Սակայն հարկ է հաշվի առնել, որ միևնույն

* «Նորավանք» ԳԿՀ Տեղեկատվական հետազոտությունների կենտրոնի փորձագետ, ԵՊՀ անձի հոգեբանության ամբիոնի դասախոս, հ.գ.թ.:

** «Նորավանք» ԳԿՀ Տեղեկատվական հետազոտությունների կենտրոնի ավագ փորձագետ:

¹ «ՀՀ տեղեկատվական տարածքի իդեոլոգեմների ուսումնասիրությունը» երկամյա գիտական հետազոտական ծրագիր է, որը մրցութային կարգով ֆինանսավորում է ստացել ՀՀ ԿԳՆ Գիտության պետական կոմիտեի կողմից:

հասարակության մեջ դավանվող արժեքների, այդ թվում՝ գիտելիքին առնչվող գաղափարների տեսակետից պատկերը կարող է խիստ անհամասեռ լինել: Պետք է նաև ամրագրել, որ անգամ ամենահիմնարար արժեքը ոչ թե ստատիկ, մեկընդմիջտ տրված բնութագիր է, այլ դինամիկ փոփոխական, որի և՛ դրսևորման ձևերը, և՛ արտահայտվածության աստիճանը, այլ կերպ ասած՝ արժեքի «արժեքը», զգայուն են ժամանակի միտումների, սոցիալ-մշակութային յուրահատկության, ներտնտեսական և մի շարք այլ գործոնների նկատմամբ: Հասարակական և տնտեսական փոխակերպումները կարող են զգալիորեն վերակառուցել տվյալ հանրության արժեքային-գաղափարական դաշտը՝ բերելով կողմնորոշիչների վերանայման: Լինելով հոգևոր, ոչ նյութական ոլորտից՝ արժեքներն, այդուհանդերձ, հաճախ կապված են կոնկրետ, «շոշափելի» իրողությունների՝ արդյունաբերության զարգացման, երկրի սոցիալ-տնտեսական վիճակի, անհատի սոցիալական նիշայի և բազմաթիվ այլ գործոնների հետ: Հետևաբար, այս գործոններից կախված գիտելիք-արժեքն ունի կոնկրետ բովանդակություն կոնկրետ երկրում, տվյալ ժամանակաշրջանում: Տարբեր հանրություններ համեմատելով գիտելիքի արտադրության ձևերի և ինտելեկտուալ գործողության նպատակի տեսակետից՝ կնկատենք որոշ առանձնահատկություններ: ԱՄՆ-ում, օրինակ, դրանք շատ ավելի ուղղակիորեն են կապվում պրագմատիկ *արդյունքի*, առաջընթացի, ազդեցության և ուժի գաղափարախոսության հետ: Մինչդեռ եվրոպական մշակութային տարածքում, որը ևս պրոգրեսիվ է համարվում, գիտելիքի ստեղծումը, այդուհանդերձ, զուտ պրագմատիզմի հիմքի վրա չէ. որպես ինքնին արժեք ընկալելի է նաև ճանաչողության և ինքնազարգացման *գործընթացը*: Այս տեսանկյունից հայաստանյան հասարակությունն առանձին հետաքրքրություն է ներկայացնում մեզ համար, որի դիտարկմանն էլ նվիրված է հոդվածը:

Արժեքների տիպերը

Մեր երկրում գիտելիքի ու կրթության հասարակական արժևորումը վերլուծելուց առաջ, սակայն, անհրաժեշտ է դիտարկել և իմաստավորել մի քանի հասկացություն: Այսպես, դիմելով սոցիալ-հոգեբանական գրականությանը,

մասնավորապես՝ Ռոկիչի արժեքների տեսությանը, կարելի է տարբերակել *ինստրումենտալ* և *տերմինալ* արժեքներ հասկացությունները: Տերմինալ կամ *վերջնանպատակ-արժեքներն* ավելի ունիվերսալ և կայուն են, դրանք կարելի է ձևակերպել որպես ցանկալի վերջնական վիճակներ, որոնք մարդը կարևորում և ձգտում է հասնել ողջ կյանքում՝ լինեն դրանք հոգևոր, թե նյութական: Ինստրումենտալ կամ այլ կերպ ասած՝ *միջոց-արժեքներն* արդեն ներկայացնում են տերմինալ արժեքներին հասնելու նախընտրելի միջոցներ, վարքաձևեր: Գիտելիքի-կրթության հանդեպ վերաբերմունքների համակարգն, այս առումով, ունի տերմինալ-արժեքի և միջոց-արժեքի փոխկապակցված բաղադրիչներ: Այսպես, օրինակ, կրթությունը մի կողմից ինքնանպատակ-արժեք է՝ կապված ինքնագարգացման ձգտումի հետ. միննույն ժամանակ, այն կարող է լինել ինստրումենտալ արժեք՝ ծառայելով այլ, օրինակ՝ ինքնադիտարկման, ինքնահաստատման, սոցիումի կամ ընտանիքի կողմից ընդունման և այլ նպատակների: Ոլորտում առկա խնդիրները քննարկելիս այս երկու շերտերը պետք է նկատի ունենալ, այսինքն՝ պարզել՝ առավելապես որպես միջոց-արժեք, թե՞ նպատակ-արժեք է վերանայված կամ «վնասված» գիտելիքի դերը մեզանում:

Գիտելիք-արժեքի ձևավորման համատեքստը Հայաստանում

Նկարագրենք այն գործընթացները, որոնք մեր և փորձագետների կողմից առանձնացվել են որպես գիտության-կրթության վերաբերյալ պատկերացումների ձևավորման միջավայր և գործոն: Այսպիսով, պայմանականորեն կարելի է առանձնացնել գիտության և կրթության հանրային արժևորման՝ *չեզոք*, *դրական* և *բացասական* գործոններ, որոնք ստորև կներկայացնենք: Միննույն ժամանակ, նկատի ունենանք այդ բաժանման պայմանականությունը, քանի որ, ինչպես օրինակներից կտեսնենք, հաճախ բացասական միտումները դրական միտումների շարունակությունն են, կամ երկուսը միննույն իրավիճակի մասն են կազմում:

1. Չեզոք (ընդհանուր) գործոններ

Չեզոք կարելի է համարել այն գործոնները, որոնք բխում են մշակութային յուրահատկություններից, հասարակության տիպից կամ էլ համաշխարհային գլոբալ միտումներից, և որոնք դժվար է գնահատել որպես դրական կամ բացասական: Դրանք որոշակի երանգ են հաղորդում գիտելիքի ձեռքբերման գերակա նպատակներին ու միջոցներին տվյալ ժամանակաշրջանում և երկրում: Այդպիսի մի քանի գործոն կարելի է առանձնացնել.

- **Համացանցը՝ որպես հանրային գիտելիքի շրջանառության հիմնական միջավայր.** Համացանցի գերիշխանության օրոք ինֆորմացիայի արտադրության, (վերա)բաշխման և այլ գործընթացները ձևափոխել են գիտելիքի ստացումը՝ այն «ցրելով» գլոբալ ցանցով մեկ: Ընդ որում՝ ցրումը մի կողմից ենթադրում է պոտենցիալ մեծ մատչելիություն և գիտելիքի «գլոբալ համահեղինակություն» (վիքիպեդիա և այլն), սակայն մյուս կողմից՝ գերաբազ շրջանառություն, որտեղ կայուն գիտելիքները կարող են փոխարինվել արագ, «հոսուն», «հեղինակագրված», իրավիճակային տեղեկատվությամբ: Այս համատեքստում դժվարանում է կոմպետենտության և ոչ կոմպետենտության, իմացության և չիմացության, հավաստիի և ոչ հավաստիի տարբերակումը: Այս հանգամանքը բարձրագույն կրթության համատեքստում, օրինակ, արտահայտվում է նրանով, որ իջեցնում է լսարանային ուսուցման և դրանով իսկ՝ ինստիտուցիոնալացված կրթության սուբյեկտիվ արժեքը սովորողների աչքում: Խորամուխ չլինելով նշված գլոբալ միտումի հնարավոր բացասական հետևանքներում, պարզապես ամրագրենք, որ այն որոշակիորեն փոփոխում է գիտելիքի գաղափարի ընկալումը նաև լոկալ մասշտաբով:
- **Հասարակության անհամասեռություն՝** սոցիալական, տնտեսական, մշակութային, կրթական բնութագրիչների առումով: Որակյալ կրթությանը հասանելիությունը խիստ տարբեր է տարբեր սոցիալ-մշակութային խմբերի համար, ինչն, անշուշտ, արտացոլվում է այս խմբերի արժեհամակարգում՝ գիտելիքի և զարգացման արժևորման տեսակետից: Ընդ որում, միևնույն դպրոցում, բուհում և անգամ խմբում սովո-

րելը դեռ չի նշանակում հնարավորությունների միանմանություն, և չի հանում որակյալ կրթության հասանելիության տարբերությունները: Անգամ նույն ուսանողական խմբում գիտելիքի սուբյեկտիվ նշանակալիության և հետագա կիրառման հնարավորությունների մասին կարծիքները խիստ անհամասեռ են: Առհասարակ, ներհասարակական բազմազանությունն այսօրվա ժամանակների բնորոշիչն է ողջ աշխարհում, իսկ մասնավորապես մեր երկրում և մասնավորապես կրթության ոլորտում խիստ ցայտուն է դարձել նախկինում՝ Խորհրդային Միությունում որակյալ հանրակրթության և բնակչության ընդհանուր բարձր կրթական ցենզի ֆոնին:

- **Գիտելիքի ձեռքբերումը՝** որպես ավելի **անհատական, քան կոլեկտիվ զարգացման սցենար:** Մեզանում գիտելիք-արժեքն առանձնապես կապված չէ հասարակության առաջընթացի մասին պատկերացումների հետ, փոխարենը դիտվում է որպես անհատի ինքնազարգացման, ամբողջականության, «պիտանիության» աղբյուր: Սա տեսանելի է ինչպես առօրյա դիտարկումներով, այնպես էլ մեր կողմից ուսանողների շրջանում արված փոքրամասշտաբ հարցումով: Վերջինիս արդյունքները վկայում են, որ մասնագիտական գիտելիքի ստացումը, ընդհանուր առմամբ խիստ կարևորվելով, առավելապես կապվում է ներքին բավարարվածության, ընդհանուր զարգացածության հասնելու, ինքնահաստատման ցանկությունների հետ:

2. Դրական գործոններ

- **Ուսման կարևորությունը, ինտելեկտուալ գործունեությունը** և ունակություններն արտահայտված են հայկական **մենք-կերպարում՝** և՛ ինքնընկալման, ինքնաբնութագրման, և՛ ինքնաներկայացման առումներով (օրինակ՝ «հայերը խելացի ազգ են»): Բնարկե, այստեղ նկատի ունենք ոչ թե այդ պատկերացումների ապացուցելի օբյեկտիվությունը, այլ սուբյեկտիվ ընկալումներում դրա մեծ կշիռը, որը ևս կարևոր է: Դա կարող ենք տեսնել և՛ հին մատյաններով հետահայաց պարծենալու մեջ, և՛ «գրագետ» մարդու մասին հասարակ գյուղացու

ակնածանքով խոսքում, և՛ բարձրագույն կրթությունն ստանալու թե-
պետ ձևախեղված, այդուհանդերձ՝ որպես այդպիսին հասարակա-
կան բարձր նշանակալիության մեջ: Ըստ փորձագետներից մեկի՝ «*մե-
զանում գիտությունը միշտ է իմաստավորվել ազգային շահի տե-
սանկյունից: Դա մի բան է, որը մեր ազգային նկարագրում շատ շեշտ-
ված է (...)* Շատ օրինակներ կան այն բանի, որ գիրքը հատուկ արժեք
ունի. երկրաշարժի օրը, Սպիտակում փրկարարական աշխատանք-
ների ժամանակ, շարք կանգնելով՝ քարեր էին փոխանցում իրար
զցելով, որ մաքրեն տարածքը, բայց որ գիրք էր լինում, իրար չէին
զցում, այլ մեծ հարգանքով, իրար տալով փոխանցում էին: Դա ար-
տահայտվում է նաև ամենատղետ խավի մոտ»: Շարունակելով՝ փոր-
ձագետն, իհարկե, իր մտավախությունն է հայտնում, որ այս արժեքը
սկսում է կորչել՝ որակյալ կրթության թանկացման ֆոնին: Ուսանող-
ների շրջանում մեր կողմից անցկացված հարցման արդյունքները
դեռևս թույլ են տալիս լավատես մնալ. ընդհանուր և մասնագիտա-
կան գիտելիքների ստացումը շարունակում է կարևորվել՝ անկախ
կրթության որակի և աշխատաշուկային անհամապատասխանու-
թյան հետ կապված դժգոհություններից: Այսինքն՝ գիտելիքի ստացու-
մը որպես ինստրումենտալ արժեք՝ պրագմատիկ նպատակների հաս-
նելու միջոց, հստակ չէ, բայց պահպանված է որպես տերմինալ արժեք:

- Չնայած կրթական նոր, «անհարթ» համակարգին անցնելուն զուգըն-
թաց բնակչության մի ստվար հատվածի ինտելեկտուալ գորշացմանը՝
Հայաստանում կարելի է արձանագրել նաև ***նոր ինտելեկտուալ խմբե-
րի ձևավորում***: Այդ խմբերը ձևավորվում և կենսագործում են միաժա-
մանակ առցանց և իրական ռեժիմներով, գեներացնում են որոշակի՝
հանրայնորեն նշանակալի թեմաների շուրջ քննարկումներ, շրջանա-
ռում կամ ուղղորդում են դրանք: Այս խմբերը ներկայացնող մասնա-
գետները բնորոշվում են բարձր մոբիլությամբ, այլընտրանքային (ար-
տերկրյա) կրթական և գիտական համակարգերին հասանելիությամբ,
գիտական հարթակներում և սոցիալական ցանցերում (այդ թվում՝
վիրտուալ) միաժամանակյա բարձր ակտիվությամբ: Ըստ էության, լի-

նելով իրենց գումարը մտածելու միջոցով վաստակող մարդիկ՝ նրանք դրանով իսկ այս կամ այն չափով նպաստում են մտավոր աշխատանքի արժեքի պահպանմանը կամ վերահաստատմանը մեր հանրության մեջ՝ բազմաթիվ թերահավատ, նյութապաշտական դիրքորոշումների ֆոնին:

3. Բացասական գործոններ

- **Նյութական արժեքների գերակայում.** Սա այսօրվա ՀՀ հանրային գիտակցության այն բնութագրիչներից է, որը որպես խնդիր նշվում է գրեթե բոլոր փորձագետների կողմից ու հիմնականում դիտվում որպես կոշտ կապիտալիզմի դրսևորում: Գործողությունների օգտակարությունը չափվում է կարճաժամկետ, «շոշափելի» չափանիշներով, որի դեպքում **մտավոր աշխատանքը** կյանքի էական կողմ չի ընկալվում՝ չունենալով անմիջական նյութական արտահայտում: Այն **արժեզրկվում է՝** պայմանավորված շուկայական պայմաններում չֆինանսավորված լինելու հանգամանքով: Նույն տիրույթում է նաև կոպիտ մրցակցության օրենքների գերիշխումը, որտեղ **հաղթող ուժը նույնացվում է կոպիտ ֆիզիկական կամ տնտեսական և ոչ՝ ինտելեկտուալ ուժի** հետ: Միևնույն ժամանակ, վերջին շրջանում կրկին նկատելի են վերարժևորման նշաններ: Այսպես, ոչ վաղ անցյալում տղաների շրջանում ուսանողի ատրիբուտիկայի չխրախուսված լինելը (օրինակ՝ «պայուսակ կրելն ամոթ է»), որը, թերևս, կրթության արժեզրկման վարքային հայտանիշ է, այսօր ավելի մեղմ է արտահայտված:
- Վերը նշված խնդրի էական կողմ է այն, որ **մտավորական աշխատանքն արժեզրկվում է** հենց **մտավոր աշխատանքով զբաղվողների աչքերում՝** հանրային կյանքում սեփական ազդեցության բացակայության պատճառով: Փորձագետներից մեկի դիտարկմամբ. **«Եթե աշխատանքը նպատակի տեսանկյունից արդյունքների չի հասնում, այն արժեզրկվում է նաև մտավոր աշխատանքով զբաղվող այդ փոքրաթիվ մարդկանց աչքերում»:**

- **Գիտական-մտավոր աշխատանքի ցածր, նումինալ ֆինանսավորում**, որի բացասական հետևանքների շղթան ինքնըստինքյան հասկանալի է թվում և համատարած նշվում է բոլոր փորձագետների կողմից:
- ԶԼՄ-ով հասարակության **գաղափարական դաշտի վրա ազդելու ռեսուրսների/չձեռքերի սղությունն իրական մտավորականության մեջ**: Փորձագետներն այս ֆենոմենի դրսևորումները տեսնում են նաև գովազդում և զանգվածային մշակույթում. «*Հայաստանի վերնախավը, որը դաստիարակության, կրթելու ռեսուրսների է տիրապետում, երկրի ու հասարակության հանդեպ պատասխանատվությամբ շատ ցածր է: Իսկ այն էլիտան, որն ունի կրթություն, մտավոր կարողություններ և մտավորական դիրքորոշումներ, ռեսուրսների չի տիրապետում: Համապատասխանաբար այն բովանդակությունը, որը ստանում ենք հիմնական լրատվամիջոցից՝ հեռուստաընկերություններից, այնպիսին է, ինչպիսին կուզենային տեսնել ռեսուրսներին տիրապետողները՝ իրենց մակարդակին համապատասխան: (...) Նույնիսկ գովազդը կողմնորոշված է ըստ նրանց սովորությունների, ճաշակների, կենսակերպի, քանի որ գովազդվող ապրանքների հիմնական գնորդները հենց իրենք են: (...) Այո, այսօր ճաշակ ու արժեք թելադրողները հենց այդ խավն է»:*
- **Մտավորականություն խմբային կատեգորիայի խնդրահարույց բնույթը և մտավորական հասկացության երկակի ընկալումը հանրության շրջանում**: Կարելի է ասել, որ առկա են տարբեր՝ իրական և պսևդոկամ այլ կերպ ասած՝ մեդիաների համար «թաքնված» և մեդիաներում ներկայացող մտավորականների խմբեր, որոնք տարբերվում են ինչպես իրենց վարքագծով, այնպես էլ մեդիա-կերպարներով: Փորձագետներից մեկի խոսքերով. «*Ընդհանրապես հասարակության մեջ, և դա նաև լրատվամիջոցներում է երևում, մտավորականություն հասկացությունը շատ նեղ է ընկալվում՝ դրանք այն մարդիկ են, ովքեր ասում են, թե իրենք մտավորականներ են: Որպես մտավորական իրենց մասին խոսում են հիմնականում գրողները, արվեստի գործիչները, այն գիտնականները, որոնք մտնում են այդ շրջանակների մեջ և*

փորձում գրողների հետ մեկտեղ ինչ-որ «մտավորական» բաներ անել: Իսկ այն գիտնականները, ովքեր ուղղակի աշխատում են և չեն խառնվում որևէ հարցի մեջ, որպես մտավորականներ չեն ընկալվում»:

- **Կրթական քաղաքականության թերությունների ազդեցությունն արժեքների ձևավորման վրա`** ի հակադրություն հռչակվող արժեքների: Փորձագետներից մեկի դիպուկ արտահայտմամբ` «Մի կողմից քարոզվում են հայոց գիրը, լեզուն, ավանդականը, բայց մեր օրենսդիրը գնաց էլիտար դպրոցների ուղղությամբ: Հայոց լեզուն այսօր վերանում է, որովհետև օրենքներ են ընդունվում, որոնցից բխում է, որ հայոց դպրոցը կարող է թույլ լինել: Դրա դեմ ուժեղ քաղաքացիական պայքար գնաց մի քիչ ազգայնական դրսևորումներով, բայց ոչնչի չհասավ, որովհետև մեր պառլամենտում այնպիսի մարդիկ չեն նստած, որոնց համար դա խնդիր լինի: Հայոց լեզու է հռչակվում ազգային շահի տեսանկյունից, բայց ընդունված օրենքով պարզ է դառնում, որ նրանք իրականում հայտարարում են, որ չեն կարող ապահովել հայկական դպրոցի բարձր որակ»: Առհասարակ, ընդունված որոշումները` որպես փաստացի քայլեր, ավելի խոսուն են ու ավելի ճշգրիտ են արտահայտում արժեքային դիրքորոշումները, քան մեդիա-հայտարարությունները: Հենց այս հանգամանքը հաշվի առնելով է, որ արտերկրում արժեքների սոցիալ-հոգեբանական հետազոտություններում արդիական մոտեցում է դարձել քաղաքական և տնտեսական սուբյեկտների գործունեության արդյունքների, որոշումների վերլուծությունը` որպես արժեքներն իրապես արտահայտող նյութ:
- Առհասարակ **կրթական համակարգի** (և՛ հանրակրթություն, և՛ բարձրագույն կրթություն) **վերափոխման** գործընթացում առկա **խնդիրները** և ընդհանուր տեսլականի անհստակությունը: Հայաստանում տարիներ շարունակ ընթացող կրթական բարեփոխումները հաճախ չեն ընկալվում հասարակության կողմից. հստակեցված չեն ո՛չ դրա առանձին բաղադրիչները և ո՛չ էլ վերջնական նպատակն ու արդյունքները: Բարեփոխումների գործընթացի տարբեր բաղադրիչների միջև անհամաչափությունը, համաձայնեցվածության պակասը և

Ֆրագմենտարությունն էլ ավելի են բարդացնում իրավիճակը: Հանրության, այսինքն՝ կրթական համակարգից «օգտվողների» շրջանում տիրող անորոշությունը հանգեցնում է դժգոհության զգացումների, կրթության նպատակահարմարության ու հետևաբար նաև՝ արժեքի շուրջ տարակուսանքի:

- Բացասական գործոնների շարքում է նաև **գիտելիքի համատեղ արտադրման մշակույթի ու կանոնների չձևավորվածությունը** (օրինակ՝ բանավիճելու, միմյանց հողվածները կարդալու, քննարկելու, կառուցողական քննադատության ձևաչափեր): Բխելով մշակութային-հասարակական յուրահատկություններից՝ այս իրավիճակը դրսևորվում է մարդկային և պրոֆեսիոնալ հարաբերությունների չտարանջատվածությամբ: Այս առումով խոսում է փորձագետներից մեկի դիտարկումն այն մասին, թե ինչպես են ավանդական արժեքները, որոնցից մենք դեռ ազատված չենք, կաշկանդում այդ հարաբերությունների տարանջատումը. «Ավանդական արժեքները դեռ դեր ունեն, դրանք կարգավորում են շատ հարաբերություններ, թեկուզ՝ աշխատանքային: Չես կարողանում քո կոլեգային, օրինակ՝ նրա հողվածը, քննադատել, որովհետև նա քեզ մարդկային կտրվածքով է ընկալում և ոչ թե՛ մասնագիտական: Եթե վերցնենք ոչ թե եվրոպական մոտեցումներով ստեղծված հիմնարկություն, այլ մեր տեղականը, ապա գերիշխողը սա է»: Որպես նման կաշկանդվածության հետևանք սահմանափակվում են հասարակայնորեն նշանակալի գիտելիքի նորացման և թարմացման իրական հնարավորությունները:
- Գիտելիքի ցածր արտադրության անբաժան մաս են **պրոֆեսիոնալիզմի դեֆիցիտը** և մոտավորությունը բոլոր ոլորտներում կամ, այլ կերպ ասած՝ **մասնագիտական գիտելիքի փոխարեն սիրողական կարծիքների գերիշխանությունը**: Սա իր արտացոլումն է գտնում նաև ՋԼՄ-ում՝ դեպի լայն զանգվածները կողմնորոշված պարզունակ և չճշտված նյութի մատուցմամբ: *«Հին Հունաստանում հստակ տարբերակում էին ճշմարտության ճանապարհը և կարծիքի ճանապարհը: Նրանք, ովքեր լուրջ էին զբաղվում, գնում էին գիտելիքի ճանապարհով, իսկ դի-*

լետանտները, որ սիրում էին մասնակցել տարբեր բամբասանքների, գնում էին կարծիքի ճանապարհով: Մեզ մոտ կարծիքի ճանապարհն է: Եթեքի հասանելիություն ունեցող ամեն մեկը կարող է իր կարծիքը արծարծել՝ առանց հիմնավորելու, լուրջ փաստարկներ բերելու՝ պարզապես այդպես եմ կարծում և վերջ», - նշում է փորձագետներից մեկը:

Մտավոր ոլորտի և կրթության թեման ՁԼՄ-ում՝ փորձագետների հայացքով

Գաղափարներն ու արժեքները ձևավորվում, տարածվում և ավելի առարկայական են դառնում ուղղորդված, նպատակային տեքստերում: Այդպիսի ուղղորդված ֆունկցիա ունեցող տեքստեր են մեդիա-տեքստերը, որտեղ հայտնի մարդիկ, կարծիք ձևավորողները, լրագրող-քննադատները և խմբագիրները դիրքորոշումներ են ձևավորում, փոփոխում կամ պահպանում հանրության գաղափարական կյանքի տարբեր ասպեկտների շուրջ: Հետևաբար, ՁԼՄ-ում գիտելիքի և հարակից թեմաների լուսաբանման ծավալը և թեմատիկ ուղղվածությունն ուսումնասիրելը հասարակության մեջ դրանց արժևորման ձևերի ճանաչման կարևոր մաս է կազմում:

Այս թեմաների շուրջ ՁԼՄ լուսաբանումը դիտարկելով՝ նկատում ենք, որ կրթության ու գիտության հարցերի մատուցման հաճախակի ռակուրս են այնպիսի **ընդհանուր հարցեր**, ինչպիսիք են ֆինանսավորման և ցածր վարձատրության խնդիրները, կրթական համակարգում առկա կոռուպցիան, պետական անբավարար հոգաձությունը: Գիտությունն ու կրթությունն ավելի շատ ներկայացված են **իրադարձային ասպեկտով**, օրինակ՝ սեպտեմբերի մեկ, պետական պարգևատրումներ, պետական այրի այցելություն դպրոց, մրցույթներ և այլն: Թեմայի սակավ լուսաբանման շուրջ գնահատականներն անշեղորեն համընկնում են նաև մեր փորձագետների՝ և՛ հասարակագետների, և՛ մեդիա-փորձագետների շրջանում: Շատ ավելի հազվադեպ են, իսկ որոշ գնահատականներով՝ բացակայում են գիտության և կրթության վերաբերյալ իրական, խորքային քննարկումները, հեղինակային լուսաբանումները հարցազրույցների կամ քննադատական վերլուծությունների ձևով (վերլուծական ինֆորմացիան), ինչպես նաև դրանք

որպես արժեք և նպատակ ամրագրող նյութերը (գնահատողական, գաղափարախոսական ինֆորմացիան):

Ինչպես փորձագիտական տեսակետները, այնպես էլ լրատվամիջոցների մեր դիտարկումները վկայում են, որ կրթություն-գիտություն թեման ոչ միայն շատ նոսր է արտացոլված, այլև **հաղորդվող լուրի մեջ ունի երկրորդային նշանակություն**՝ հանդես գալով ոչ թե որպես հիմնական թեմա՝ երկրի զարգացման հեռանկարների ու ապագայի համատեքստում, այլ մեկ ուրիշ դումինանտ թեմայի մաս կամ այն ներկայացնելու միջոց: Իսկ արդեն որպես դումինանտ թեմա հիմնականում հանդես է գալիս ներքին քաղաքականությունը: Օրինակ՝ լրատվամիջոցներում գիտության, կրթության կամ մտավորականության վիճակի քննադատությունը կամ նույնիսկ դրական երանգով լուրերը հաճախ հանդես են գալիս քաղաքական գործիչների, կուսակցությունների և կառույցների (նախարարություն) գործունեության ներքաղաքական համատեքստում: Այս իրավիճակի տարբեր կողմերն են մատնանշում փորձագիտական հետևյալ տեսակետները. «Շատ վատ նախադեպ՝ ըստ քաղաքական համակրանքների բաժանելը, տարածվել է նաև մտավորականության նկատմամբ. եթե իրենց համախոհն ես, ուրեմն օժտված ես բոլոր բարեմասնություններով և հակառակը՝ եթե իրենց համախոհը չես, մեռնելուցդ հետո անգամ «ճանապարհ» չեն դնի»: «Բոլորի կողմից կարևորվում է այս ոլորտը, պարզապես ընդդիմադրի կողմից ներկայացվում է, որ իշխանություններն ամեն ինչ հակառակն են անում, իսկ ոչ ընդդիմադիրները փորձում են ներկայացնել, թե ինչպես են իշխանություններն օժանդակում այս կամ այն գիտական կամ կրթական նախաձեռնությանը»:

ԶԼՄ լուսաբանման ընդհանրական ուղղություններից մեկն է նաև **մտավորական ոլորտը որպես խնդրահարույց ներկայացնելը**: Փորձագետներից մեկը նշում է. «Բոլոր ՉԼՄ-ը նույն դիրքորոշումներն են ձևավորում, այն է՝ մտավորականությունն Հայաստանում չկա, Հայաստանը պրոբլեմ ունի մտավորական ունենալու հետ: Սա է հիմնական թեմատիկ գծերից մեկը: Եվ սա այն է, ինչ մարդիկ կարդում են, ու նստվածք է տալիս»: Այսպիսի դիտարկման լրացուցիչ պատկերավոր հիմնավորումն է վերջերս առցանց լրատվամիջոցներից մեկում երկրի հանրային կերպարներից մեկի՝ Հ.Թո-

խատյանի հետ հարցազրույցը, որտեղ նա իր իսկ օրինակով խնդրո առարկա է դարձնում մտավորականության շերտը. «*Դուք ինձ բնորոշեցիք մի շերտի ներկայացուցիչների անունով, որն այսօր, ցավոք, դարձել է անկարող: Մենք մեր ձեռքով ամեն ինչ արեցինք, որ «մտավորական» հասկացությունը, շերտը գոյություն չունենա: Մենք՝ որպես շերտ, միահամուռ գոյություն չունենք, մեզ մասնատեցին, ինչ կարող էին անել խեղճ մտավորականության գլխին՝ արեցին, դրեցին մի կողմ»:*

Նախորդ հարցի հետ որոշակիորեն կապված է լուսաբանման մեջ **մտավորական** և մշակութային գործչի **կերպարի ռեդուկցիան, նրա նույնացումը փոփ-գործիչներին**. «*Այն ոլորտները, որտեղ մտավորականներն են ու մտավոր աշխատանքը, շատ քիչ է լուսաբանվում. մեր գիտնականների, արվեստի գործիչների մասին շատ քիչ հաղորդումներ, որակյալ տեղեկատվություն կա: Դա փոխարինվել է ավելի շուտ պոպուլյար երգիչների, դերասանների, շոումենների կյանքի մասին տեղեկատվությամբ (...): Անգամ եթե մարդն իսկապես զբաղվում է մտավոր աշխատանքով, ամեն դեպքում նրան ներկայացնում են այնպես, ինչպես կներկայացնեին փոփ-երգչին. մտնում են նրա կյանքի այն մանրամասնությունների մեջ, որոնցով ներկայացնում են մյուսներին»:*

Լրատվամիջոցները ոչ միայն չեն ձևավորում գիտելիքի վերաբերյալ «հավելյալ», դրական արժեքներ (ինչը գուցե և չի էլ մտնում մասնավոր լրատվամիջոցների գործառույթներում), այլև առնվազն տարերայնորեն ձևավորում են բացասական հակաարժեքներ: ՋԼՄ-ին առաջատար դեստրուկտիվ դեր է վերագրում փորձագետներից մեկը՝ նշելով. «*Ես տեսնում եմ, որ արժեքները կործանվում են, և այս գործում ՋԼՄ-ն խաղում են առաջնային դեր, ցավոք սրտի, և հիմնականում, իհարկե, հեռուստատեսությունը: Եթե ամենադիտվողներից է «Դժվար ապրուստ» սերիալը, ապա դրանից այն կողմ ի՞նչ կարող ենք ասել»:* Նույնիսկ վերացարկվելով ծայրահեղ գնահատականներից՝ չենք կարող չնշել, որ նման մեղիա-պրոդուկտներում, ինչպիսիք սերիալներն են, հաճախ ինտելիգենտի կամ սովորողի «թույլիկ», «միամիտ» կերպարների ներկայացմամբ ամրագրվում է եթե ոչ նրանց հանդեպ բացասական դիրքորոշումը, ապա առնվազն՝ ուսման

մասին պարզունակ պատկերացումը: Այս առումով դիպուկ է հասարակագետներից մեկի դիտարկումը, որ չնայած վերը նշված սերիալում, օրինակ, հերոսներն ուսանողներ են, որ սովորում են ինչ-որ համալսարանում, իրական այուժեն ոչ մի ակնարկ և ոչ մի տրամադրած բույե չունի նրանց կյանքի ուսումնական մասով (թեկուզ հպանցիկ լսարանային դրվագներ, ինչ-որ թեմայի կամ դասախոսի քննարկում և այլն), այսինքն՝ ուսանող լինելու գաղափարը գուտ նումինալ է, փոխարենը ընդգծված են նրանց կյանքի՝ ուսանողության փուլին խորթ մի շարք ասպեկտներ:

Որպես վերը նշված շատ երևույթների պատճառ՝ փորձագետների մեծ մասը հանգում է **ՀՀ մեդիայում մասնագիտական որակի, ցածր պրոֆեսիոնալիզմի խնդիրներին**, որոնց ակունքներն իրենց հերթին ոչ համարժեք, ոչ որակյալ կրթության մեջ են առհասարակ՝ ինչպես և մասնագիտական պատրաստման բոլոր այլ ոլորտներում: Այսպիսով, եթե անգամ ենթադրենք, որ մեդիան պետք է լիներ գիտելիքի՝ որպես արժեքի հանդեպ դիրքորոշումների ձևավորման կարևոր մասնակից, այն այսօր այդ կարողությունը չունի, քանի որ ի՛նքն ունի կադրերի, գիտելիքի պակասի խնդիր: Ըստ փորձագետների. *«Խոր քննարկումներ չկան ՁԼՄ-ում և չեն էլ կարող լինել, քանի որ այդ խոր քննարկումներին ամեն մեկը ունակ չէ: Իսկ մեր ՁԼՄ-ում հիմա, փաստորեն, ամեն մեկն է աշխատում (...): «Լրատվամիջոցները տարածում են վատ գաղափարախոսություններ, քանի որ դա միակ միջոցն է մարդկանց ուշադրությունը գրավելու, քանի որ իրենք չեն կարողանում աշխատել որպես պրոֆեսիոնալ լրատվամիջոց: Օրինակ՝ մենք այսօր չունենք գուտ լրատվական գործակալություն, այնպիսի լրատվամիջոցներ, որոնք պարզապես տան ինֆորմացիա, որտեղ մեկնաբանություն չլինի, վերջում գրված չլինի՝ ով է տականքը, ով է լավը, ինչը, ինքնըստինքյան, սխալ հունով է ձևավորում արժեքային դաշտը»:* Նշվածը ոչ թե պարզապես մասնագիտական կրթության բովանդակության, այլ կրթական քաղաքականության լուրջ խնդիրների մակարդակում է գտնվում: Փորձագետների կարծիքով. *«Կրթության նախարարության պրոբլեմն է, բայց Կրթության նախարարությունը չի ընկալում դա որպես իր պրոբլեմ: (...) Լրագրողները նորմալ կրթություն չեն ստանում, ու որպես հետևանք ստանում ենք վատ լրագրողներ, վատ*

«կթվորուհիներ» և այլն»: «Մարդիկ մեր հեռուստատեսության մասին այսպիսի պատկերացում ունեն. այն հզոր բարոյական զենք է, որը պետք է բոլորին կրթի, դաստիարակի: Բայց ինքը գործիք է, ինչպես բջջային հեռախոսը: Համալսարանի մի դասախոս այն օրը ԱԺ-ում ասում էր՝ ինչ խայտառակություն է հեռուստատեսության լեզուն, ես ասացի. «(...) մեզ մոտ գալիս են Ձե՛ր ուսանողները, փոխանակ մենք բողոքենք, Դուք եք բողոքում»:

Վերոնշյալ պրոֆեսիոնալ գիտելիքի պակասի հետ սերտորեն կապված բնութագիր կարելի է համարել նաև այն, որ **կարծիքի ձևավորման փոխարեն** ԶԼՄ-ն հաճախ ձևավորում են **ընդամենը էմոցիաներ**, հիմնականում՝ բացասական: Նույնիսկ որպես կարծիք ձևակերպված նյութերը հաճախ այնքան բացասական գնահատականներ և կլիշեներ են պարունակում, որ իրականում կարող են ազդել միայն հուզական և ոչ՝ ինտելեկտուալ մակարդակում: Փորձագետներից մեկը նշում է. *«Թերթն այսօր չի ընկալվում որպես կարծիք ստեղծող: Ինչպես օպոզիցիոն թերթն է համարում, որ պետք է թույն թափել, այնպես էլ մյուս կողմն է այդպես անում: Դրանով կարծիք չի ձևավորվում»:*

Վերջաբանի փոխարեն

Հողվածում քննարկված երևույթներն ամփոփելով՝ կարելի է ամրագրել նրանց՝ 1. օրինաչափ ծագումը, 2. ոչ միանշանակ և շրջելի լինելը: Ժամանակի իրողություններից կախված՝ գիտելիքի և կրթության պրագմատիկ նշանակությունը կարող է ժամանակավորապես հետ մղվել կամ ակնհայտ չլինել, սակայն դա չի կարող դրանց՝ որպես առհասարակ արժեքի, անկման մասին վերջնական կանխատեսումների բավարար հիմք լինել: Որևէ ոլորտի հանրային արժևորման նվազումը դեռևս չի նշանակում այդ արժեքի դուրսմղում, քանի որ արժեքները խորքային, կենսական հիմք ունեն, և մշակույթում դրանք փոխելը լեզուն փոխելու պես բան է: Կանխատեսում պարունակող կարծիքներն, անշուշտ, տարբեր են՝ խիստ հոռետեսականից մինչև լավատեսական, ինչը հաճախ կապված է այն հանգամանքի հետ, թե հասարակության որ խմբի բնութագրերն են դիտվում որպես հասարակության առաջատար պատկեր, և որ շերտում ընթացող պրոցեսներն են դիտվում

որպես ավելի ազդեցիկ՝ համահասարակական մասշտաբով: Այսօր գիտելիքի տեղն ու դերը փոխվում են ոչ միայն մի ժամանակաշրջանից մյուսը և մի հասարակությունից մյուսը, այլև հասարակության տարբեր սեգմենտների միջև: Այսպիսի բազմազանությունը և բազմագործոնությունը պետք է հաշվի առնել ներկայումս Հայաստանում գիտելիքի և կրթության շուրջ ընթացող գործընթացները և նրանց ներքին-արժեքային կողմը քննարկելիս: Մասնավորապես, ՁԼՄ դաշտի մասով կարող ենք ամփոփել, որ մեր քննարկած խնդրի հիմնական լուծումներից մեկը ոչ թե թեմայի լուսաբանման ինքնանպատակ ավելացումն է, այլ, բնականաբար, պրոֆեսիոնալիզմի բարելավումը: Ի հավելումս, ավելորդ չէ իրական-գործող և հոչակվող (դեկլարատիվ, ցանկալի) արժեքների տարբերակումը հաշվի առնելը: Որևէ գաղափարի, տվյալ դեպքում՝ գիտության կամ կրթության արտացոլվածությունը, այսինքն՝ ՁԼՄ-ում դրա զուտ քանակական կշիռը, դեռևս ինքնուրույն թեմայի կարգավիճակ ունենալու նշան չէ, քանի որ գաղափարը կարող է որպես միջոց շահարկվել այլ գաղափարների սպասարկելու համար: Եվ վերջապես, արդարացի լինելու համար նշենք նաև, որ մեդիայի որակը խնդրի ընդամենը մի մասն է: Ըստ էության, մեդիան այս փուլում ոչ այնքան գաղափարական դաշտի ձևավորողը, որքան արտացոլողն է, և պարզ ասած, այն չի կարող երևոյթն արտացոլել ավելի շատ կամ որակյալ, քան այն կա հասարակության շրջանում, հակառակ դեպքում կունենանք գիտելիք-արժեքի ուռճացված, արհեստական լուսաբանում՝ առանց իրականության մեջ դրա հիմնավորման: Մեդիան հանրության շրջանում կարծիքի առաջատարների գաղափարների «մեդիատորն» է, հետևաբար փոփոխությունները պետք է կատարվեն հենց այդ մակարդակում: Ինչպես փորձագետներից մեկն է նշում. «*Լրատվամիջոցները միայնակ չեն կարող անել դա: Միայն տոտալիտար հասարակություններում լրատվամիջոցները կարելի է դիտարկել որպես այդպիսի առաքելություն ունեցող: Մեր դեպքում Հայաստանի տեսլականը պետք է ձևավորվի հասարակության մեջ, քաղաքական շրջանակներում, և եթե այն լինի, ապա լրատվամիջոցները կկարողանան այն կամուրջը լինել, որը դա կհասցնի բոլորին: Եթե դա չկա ոչ մի տեղ, լրատվամիջոցները չեն կարող հորինել, ձևավորել, ձևակերպում տալ*»:

ՀԱՅԱՍՏԱՆՑԻ ԻՆՏԵՐՆԵՏ-ՕԳՏԱՏԻՐՈՋ ՊԱՏԿԵՐՈՐ

Մամուլի Մարտիրոսյան՝

Ընդհանուր վիճակագրություն

Հայաստանի ինտերնետ-օգտատերերի թիվը վերջին երեք տարվա ընթացքում կտրուկ աճել է: Վերջին տվյալներով՝ Հայաստանի 2 մլն 967 հազ. 975 բնակչության մոտ 47,1%-ի, այն է՝ 796 հազ. 550 մարդու համար, 2011թ. հունիսի տվյալներով, ինտերնետը հասանելի է: Ըստ «*Internet WorldStats*» միջազգային կազմակերպության՝ սա ԱՊՀ երկրների մեջ ինտերնետի ամենաբարձր հասանելիության ցուցանիշն է¹: Անցած կես տարվա ընթացքում օգտատերերի թիվն ակնհայտորեն աճել է:

2012թ. փետրվարին *Circle.am* համակարգում գրանցված հայկական կայքերում օրական գրանցվել է 1,25-1,35 միլիոն այցելություն, որոնց 58%-ն է հայաստանի օգտատեր²: Նույն ժամանակահատվածում միայն լրատվական կայքերի այցելությունները կազմում են ողջ հայկական համացանցի այցելությունների կեսից ավելին՝ 680-750 հազար այցելություն օրական, որոնց 57%-ն է հայաստանի օգտատեր³: Սա վկայում է հայաստանի օգտատերերի՝ քաղաքական և հասարակական թեմաներով առավել հետաքրքրվածության մասին:

Եթե դիտարկենք Հայաստանից դուրս գտնվող կայքերի հանդեպ հետաքրքրությունը, ապա այստեղ հիմնականում այցելությունները սոցիալական ցանցերում են, փնտրող մեքենաներում և տեսանյութեր ներկայացնող հար-

^{*} «Նորավանք» ԳԿՀ Տեղեկատվական կենտրոնի փորձագետ:

¹ <http://www.panorama.am/am/IT/2012/02/10/inet/>

² <http://www.circle.am/?go=cainfo&cat=onelist>

³ <http://www.circle.am/?go=cainfo&cat=news>

թակններում: Ըստ *Alexa.com*-ի, Հայաստանից ամենաայցելվող կայքերի եռյակը փետրվարին եղել են *Facebook.com*-ը, *Youtube.com*-ը, *Google.com*-ը⁴.

Հայաստանից ամենաայցելվող կայքերն ըստ Alexa.com-ի

1. Facebook.com
2. Youtube.com
3. Google.com
4. Google.am
5. Odnoklassniki.ru
6. Mail.ru
7. Google.ru
8. Wikipedia.org
9. Yandex.ru
10. Yahoo.com

Ի՞նչ են փնտրում համացանցում հայաստանցիները

Ըստ Հայաստանում ամենաօգտագործվող փնտրող համակարգի՝ *Google*-ի, հայաստանցիների նախասիրությունները համացանցում հետևյալն են:

2011թ. հիմնականում փնտրվող բառերը թույլ են տալիս տեսնել, որ օգտատերերի նախասիրությունները սոցիալական ցանցերն են, ֆիլմերը և երաժշտությունը: Բացի դրանից, երկու ՋԼՄ են հայտնվել կտրուկ աճած փնտրվող բառերի մեջ (*Նկար 1*):

Եթե անդրադառնանք 2012թ. առաջին երկու ամիսներին, ապա իրավիճակն առանձնապես չի փոխվել (*Նկար 2*): Միայն կարելի է նկատել, որ ավելի է շատացել համացանցից զանազան նյութեր ներբեռնելու ցանկությունը, ինչը, ամենայն հավանականությամբ, պայմանավորված է ինչպես ինտերնետ կապի միջին արագության աճի, այնպես էլ հասարակության մեջ աստիճանաբար ավելի տարածվող ֆիլմերը համացանցից ներբեռնելու մոդայով:

⁴ Հարկ է նշել, որ նման վիճակագրությունները հաշվի չեն առնում պոռնոգրաֆիկ բնույթի կայքեր կատարվող այցելությունները, որոնք գրեթե ողջ աշխարհում ամենաշատ այցելվողներն են: Հայաստանը նույնպես բացառություն չէ: Ավելին, ըստ *Google*-ի, Հայաստանից «porno» բառը փնտրում են աշխարհում ամենաշատը՝ բոլոր այլ փնտրվող բառերի զանգվածի համեմատ: Դրանում կարելի է համոզվել *Google* համակարգի վիճակագրության էջից <http://www.google.com/insights/search/#q=porno&cmpt=q>

Նկար 1




Հայաստանից 2011թ. ամենափնտրվող բառերն ըստ Google.com-ի

Search terms		
Top searches		Rising searches
1. online	100	1. friv Breakout
2. games	65	2. news.am +1,050%
3. youtube	55	3. statusner +450%
4. skachat	55	4. 2012 +140%
5. google	55	5. odnoklassniki +140%
6. odnoklassniki.ru	50	6. list.am +110%
7. mp3	50	7. kino +70%
8. armenia	50	8. mario +70%
9. odnoklassniki	35	9. online +60%
10. facebook	30	10. armenia.tv +50%

Հայաստանի ինտերնետ-օգտատիրոջ վիճակագրական պատկերը դեռևս լրջորեն ուսումնասիրված չէ: Չնայած փնտրող մեքենաները և վարկանիշային համակարգերը թույլ են տալիս ինչ-որ պատկերացում կազմել, սակայն ավելի խոր ուսումնասիրությունը պահանջում է ավելի լայն և հանգամանալի ուսումնասիրություն, որը կներառի ինչպես տեխնիկական, այնպես էլ հասարակագիտական մեթոդների համադրումը, ինչը դեռևս Հայաստանում չի անցկացվել:

Նկար 2

Հայաստանից 2012թ. ամենափնտրվող բառերը, ըստ Google.com-ի

Top searches		Rising searches	
1. скачать	 100	1. friv	+200%
2. skachat	 65	2. kino	+100%
3. games	 65	3. фильмы	+90%
4. odnoklassniki.ru	 60	4. statusner	+70%
5. скачать бесплатно	 55	5. facebook	+60%
6. youtube	 55	6. translate	+60%
7. armenia	 55	7. odnoklassniki.ru	+50%
8. google	 55	8. игры	+50%
9. mp3	 45	9. igri	+40%
10. facebook	 40	10. love	+40%

ԼՈՒՐԵՐ

Ադրբեջանցի հաքերների նոր թիրախը՝ 20 հայկական կայք

Ադրբեջանցի հաքերները շարունակում են կիբերհարձակումների ենթարկել հայկական կայքերը: Այս անգամ նրանց թիրախն է հանդիսացել 20 հայկական կայք, որոնց թվում է Հայաստանի ազգային արխիվի կայքը: Այս մասին տեղեկացրել է տեղեկատվական անվտանգության մասնագետ Սամվել Մարտիրոսյանը: «Կոտրած» կայքերում հաքերները թողել են գրություններ, մասնավորապես, հայհոյանքներ՝ ուղղված Ֆրանսիայի նախագահ Նիկոլա Սարկոզիին: Այս տարի սա առաջին հարձակումը չէ ադրբեջանական կողմից: Վերջերս նրանք կիբերհարձակման էին ենթարկել Արարատյան թեմի, «Վալեքս Գրուփ» ընկերության, Գավառի պետական համալսարանի, Խոսքի ազատության պաշտպանության կոմիտեի, Արցախի կառավարական և մի շարք այլ կայքեր:

<http://www.panarmenian.net/arm/news/99092>

Հաքերները դարձել են ավելի դիպուկ և վտանգավոր

IBM կորպորացիան հրապարակել է իր ավանդական կիսամյակային *X-Force* հաշվետվությունը, որն ընդգրկում է 2011թ. երկրորդ կեսը: Հաշվետվության գլխավոր եզրակացությունը հանգում է նրան, որ հաքերները սկսել են ավելի քիչ հարձակումներ իրականացնել, սակայն դրանք դարձել են զգալիորեն ավելի դիպուկ: Եթե նախորդ տարիներին հարձակումները զանգվածային բնույթ էին կրում, ապա այժմ դրանք նպատակային են և շատ դեպքերում կողմնորոշված դեպի կոնկրետ խումբը կամ կոնկրետ անհատը: Հաշվետվության հեղինակները հայտնում են, որ ընդհանուր առմամբ հարձակվողները վերանայում են իրենց ռազմավարությունը՝ օգտագործելով տրենդային տեխնոլոգիաներ, ինչպիսիք են սոցիալական ցանցերը և բջջային սարքերը: Հաշվետվության մեջ խոսվում է բարդ հարձակում-

ների շեշտակի աճի մասին, որոնք ուղղված են դեպի տարբեր ոլորտների բիզնես-օգտատերեր, օրինակ՝ պետական սեկտորից կամ նավթային արդյունաբերությունից:

http://information-security.ru/newstext.php?news_id=83889

ՆԱՏՕ-ն կծախսի \$67 միլիոն կիրքերանվտանգության համար

Finmeccanica իտալական կազմակերպությունը ՆԱՏՕ-ի հետ *NCIRC (NATO Computer Incident Response Capability)* կիրքերաշտպանության ծրագրի մշակման, ներդրման և մատակարարման պայմանագիր է կնքել: Ինչպես հաղորդվում է կազմակերպության կայքում տեղադրված մամլո հաղորդագրության մեջ, պայմանագրի արժեքը գնահատվում է \$67 միլիոն: Համաձայնագրի շրջանակներում իտալական կազմակերպությունն ամերիկյան *Northrop Grumman* կազմակերպության աջակցությամբ կապահովի մոտ 50 օբյեկտների և ՆԱՏՕ շտաբ-գրասենյակների թվային անվտանգությունն աշխարհի 28 երկրներում: Ինչպես ակնկալվում է, *NCIRC*-ը կարող է բացահայտել և չեզոքացնել պահպանվող օբյեկտների սպառնալիքները ՆԱՏՕ պահանջներին համաձայն: Ինչպես նշում է *Bloomberg*-ը, *Finmeccanica*-ն դարձել է առաջին ոչ ամերիկյան կազմակերպությունը, որը խոշոր պայմանագիր է կնքել ՆԱՏՕ-ի հետ թվային անվտանգության ոլորտում: Իտալական կազմակերպության ներկայացուցչի խոսքերով՝ ՆԱՏՕ 28 անդամ երկրներից յուրաքանչյուրը կարող է ծրագրի մեջ ներդնել 100 միլիոն եվրո մոտակա 3-5 տարում: Մեծ Բրիտանիան այդ նպատակի համար արդեն հատկացրել է 650 միլիոն ֆունտ սթերլինգ: Թե ինչ միջոցներ է ծրագրում ներդրել ԱՄՆ-ը, չի պարզաբանվում: 2010թ. Պենտագոնի ներկայացուցիչները հայտարարել էին, որ ԱՄՆ-ը հաքերներից պաշտպանվելու վրա ծախսել է մոտ \$100 միլիոն:

<http://www.csef.ru/actual/2839>

Իսրայելը հզորացնում է կիբերպաշտպանությունը

Իսրայելի բանակը հարստացնում է իր հնարավորությունները «տեղեկատվական դարաշրջանի» նոր մարտահրավերներին, մասնավորապես՝ հաքերներից եկող պոտենցիալ վտանգին հակազդելու համար: Միայն վերջին ժամանակաշրջանում ռազմական ծառայության են ընդունվել համակարգչային ցանցերի մոտ 300 երիտասարդ մասնագետներ: Այս մասին հայտնում է «*The Jerusalem post*» թերթը: Նրանք կծառայեն 8 200 ռազմական հետախուզման ենթաբաժնում, ինչպես նաև C4I ենթաբաժնում՝ հրամայման, վերահսկման, կապի, համակարգիչների և հետախուզման կառավարման աշխատանքներին: Սրանք երկու կառույցներ են, որոնք պատասխանատու են «համակարգչային պատերազմների» համար: Ավելի վաղ այնտեղ մշակվել են տեղեկատվության կողմնորման և ցանցերի պաշտպանության միջոցներ, որոնք պատկանում են բանակին և պետության ռազմավարական կոնցենտին, իսկ այժմ, ըստ թերթի տվյալների, կզբաղվեն նաև կիբերտարածությունում «հարձակողական պոտենցիալի» հզորացմամբ: Բացի այդ, ստեղծվող «կիբերգործերը» պատասխանատու են լինելու բարձր տեխնոլոգիաների ոլորտում իսրայելական կազմակերպությունների նոր ծրագրային ապահովման մշակման աշխատանքները համակարգելու համար: «Կիբերպաշտպանության» նոր ենթաբաժնի ձևավորումը սկսվել է այն բանից հետո, երբ Իսրայելի վարչապետ Բ.Նեթանյահուն հայտարարել է ազգային նպատակային կիբերխմբավորման ստեղծման անհրաժեշտության մասին՝ երկրի կենսական նշանակության ենթակառուցվածքների պաշտպանության համար: Բանակի հիմնական մտավախությունը կապված է այն բանի հավանականության հետ, որ հակառակորդը կփորձի խափանել ռազմական ցանցի աշխատանքը ռազմական գործողությունների ժամանակ: «Մեզ համար կիբերպաշտպանություն նշանակում է աշխատանքը շարունակելու ունակություն և հնարավորություն՝ ապավինելու մեր ցանցերի անվտանգությանն ու հասանելիությանը», - ընդգծել է C4I-ի կառավարման բարձրաստիճան սպան:

Зарубежное Военное Обозрение, 2/2012, ст. 104

Իրանի կիբերպաշտպանական քայլերը

Իրանի պաշտպանության նախարարությանը կից ստեղծվել է կիբերհարձակումների նախազգուշացման և հետևանքների չեզոքացման կենտրոն, որը պետք է համակարգի բոլոր գերատեսչությունների ջանքերը, այդ թվում կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության կառույցները: Այսպես, 2010թ. Իրանում բացահայտվել էր *Stuxnet* վիրուսի հարձակումը: Ներկայումս ակտիվ աշխատանքներ են տարվում այլ վիրուսների բացահայտման և հակազդման ուղղությամբ, մասնավորապես՝ «Ռուկու» համակարգչային ծրագրի մասով:

Зарубежное Военное Обозрение, 1/2012, стр. 95

Աշխարհաքաղաքական

ԿՈՎԿԱՍԱԸ ԳԼՈՒԲԱԼ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ¹

*Հրայր Արզումանյան**

Ղարաբաղյան կարգավորման վերաբերյալ գնահատականներն ու կանխատեսումները, օրինակ՝ Ալեքսանդր Խրամչիխինի «Պայքար Ղարաբաղի համար 2.0» հոդվածում արժանի ուշադրությամբ չեն անդրադառնում անվտանգության միջազգային միջավայրի որակական այն փոփոխություններին, որոնք կատարվել են վերջին ժամանակներս: Փորձագետները նախընտրում են խոսել Արցախի և արցախյան հիմնախնդրի մասին՝ մնալով Հայաստանի (հանձինս Հայաստանի Հանրապետության և ԼՂՀ-ի) և Ադրբեջանի սովորական և արդեն լավ ուսումնասիրված դիմակայության շրջանակներում:

Նման մոտեցումը համապատասխանում է 1990-ականների սկզբի իրողություններին, երբ Ռուսաստանը՝ որպես ԽՍՀՄ ժառանգորդ, բավական ծանր կշիռ ուներ՝ կասեցնելու համար դրսից հակամարտող կողմերի վրա գործադրվող ռազմաքաղաքական ճնշման փորձերը: Որպես քաղաքական երևույթ գոյությունը դադարեցրած ԽՍՀՄ սահմանները, այնուամենայնիվ, շարունակում էին մնալ աշխարհաքաղաքական այլ կենտրոնների ակտիվությունը սահմանափակող աշխարհաքաղաքական իրականություն: Սակայն 20 տարվա մեջ շատ բան է փոխվել ինչպես տարածաշրջանում, այնպես էլ շրջակա աշխարհում:

Արցախն անցել է իր պետականության կայացման՝ իրադարձություններով լի էվոլյուցիոն ճանապարհ: Այո, դա արտաքին աշխարհի համար

¹ http://www.csef.ru/studies/politics/projects/russian_armenian_relations/articles/2704/

* Տեխնիկական գիտությունների թեկնածու:

փոքր-ինչ անսովոր և անձանոթ գործընթաց է, քանի որ ԼՂՀ կայացումը տեղի էր ունենում առանց միջազգային հանրության մասնակցության, բայց, ի տարբերություն բազմաթիվ այլ ճգնաժամային կետերի, այստեղ այն հաջող ստացվեց: Նոր պայմաններում Արցախն անտեսելու կամ այն «ղաբախյան հիմնախնդրին» հանգեցնելու փորձերն ակնհայտորեն սխալ են:

Ինչ վերաբերում է միջազգային համատեքստին, ապա հետխորհրդային ժամանակաշրջանի տակ գիծ քաշած հնգօրյա պատերազմը (2008թ.) և արաբական զարթոնքը (2011թ.) արմատապես փոխեցին աշխարհաքաղաքական լանդշաֆտը: Եվ այս նոր պայմաններում ցանկացած ռազմաքաղաքական սցենար, որը ենթադրում է Կովկասի մեկուսացում «կայունության աղեղում» ընթացող գլոբալ գործընթացներից, դառնում է ոչ միայն անհամարժեք, այլև վտանգավոր: Վերն ասվածը կարելի է ցույց տալ վերջին ժամանակների ադրբեջանական արտաքին քաղաքականության օրինակով, երբ Միլի մեջլիսի մի շարք պատգամավորներ բարձրացրել են իրենց պետությունը Հյուսիսային Ադրբեջան վերանվանելու հարցը: «Ադրբեջանի տարածքի երկու երրորդը մտնում է ներկայիս Իրանի կազմի մեջ, ուստի անհրաժեշտ է Ադրբեջանի Հանրապետությունը վերանվանել Հյուսիսային Ադրբեջանի Հանրապետություն», - հայտարարել է Ադրբեջանի ժողովրդական ճակատ միասնական կուսակցությունից պատգամավոր Ղուդրաթ Հասանդուլիևը: «Սա բավական կարևոր հարց է: Աշխարհում կան այդպիսի օրինակներ. Հյուսիսային և Հարավային Կորեան, Հյուսիսային և Հարավային Կիպրոսը: Նպատակահարմար կլիներ, եթե Ադրբեջանը, որպես մասերի բաժանված պետություն, կոչվեր Հյուսիսային Ադրբեջան», - ընդգծել է իշխող «Ենի Ազերբայջան» կուսակցության գործադիր քարտուղարի տեղակալ Սիյավուշ Նովրուզովը: Ըստ էության, խոսքն Ադրբեջանի կողմից իր հարավային հարևանին տարածքային հավակնություններ հնչեցնելու մասին է:

Ադրբեջանական քաղաքական գործիչների նման պահվածքն ինչ-որ իմաստով առօրեական է դարձել հայկական կողմի և ողջ հետխորհրդային տարածքի համար: Այստեղ արդեն վարժվել են, որ ադրբեջանցի քաղաքական գործիչները խոսում են վերջնազրեթի լեզվով՝ իրենց չճանաբախեցնելով ձևակերպումների ընտրության և հնարավոր հետևանքների մասին մտա-

ծելու հարցում: Սակայն այս դեպքում Ադրբեջանն ակնհայտորեն դուրս է եկել թույլատրելի սահմաններից և, հատելով հետխորհրդային տարածքի սահմանը, սպառնում է մի պետության, որը գտնվում է Արևմուտքի հետ կոշտ ռազմաքաղաքական առճակատման փուլում:

Ստեղծված պայմաններում Իրանը հազիվ թե ցանկանա խորամուխ լինել ադրբեջանական պետականության «հոգեբանական բարդությունների» մեջ և պարտավոր կլինի նմանատիպ հայտարարություններին վերաբերվել որպես մտածված և համաձայնեցված քաղաքական քայլերի: Մանավանդ որ Իրանն առանց այդ էլ ստիպված է Ադրբեջանը դիտարկել որպես պլացդարմ, որտեղից կարող են քայլեր ձեռնարկվել այդ երկրում իրավիճակի կայունությունը խափանելու համար: Եվ այն արդեն նախազգուշացրել է, որ իրանական պետության դեմ ադրբեջանական տարածքը թշնամական գործողությունների համար օգտագործելու պարագայում հակազդեցության համարժեք քայլեր կձեռնարկվեն, ընդհուպ մինչև ռազմական հարվածներ հասցնելը:

Այսպիսով, հետխորհրդային տարածքի սահմանները կովկասյան ուղղությամբ «ցանցկեն» են և արդեն չեն բացառում երկու ուղղությամբ ռազմաքաղաքական հզորության ցուցադրումը: Այս պայմաններում հայադրբեջանական սահմանափակ պատերազմի սցենարների քննարկումը, առնվազն, անլուրջ (եթե ոչ՝ անպատասխանատու) է թվում: Ակնհայտ է, որ Արցախի շուրջ ռազմաքաղաքական ակտիվությունն ավելի լայն պատկերի տարր է հանդիսանում: Եվ դատողություններ անել պատերազմ սանձազերծելու հարավկովկասյան պետությունների նախաձեռնության մասին՝ ելնելով նեղ ազգային շահերից, թույլատրելի է միայն այն դեպքում, եթե ձեռնարկվող քայլերը ներգրվում են ավելի լայն միջազգային համատեքստում:

Իհարկե, ազգային շահերը կարող են դառնալ սադրանքի հիմք (թիրախ ունենալով քաղաքական առաջնորդների անհետատեսությունն ու չմտածված քայլերը, ինչը տեղի ունեցավ 2008թ.), բայց ոչ երբեք՝ մարտական գործողությունների սանձազերծման իրական դրդապատճառ:

ԱՌՐԲԵՋԱՆԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱՎԹԱՅԻՆ ՈԼՈՐՏԸ¹

*Արա Մարջանյան**

Պաշարները

Ադրբեջանի հում նավթի ապացուցված պաշարները (*proved reserves*) չեն փոխվել 2002-ից ի վեր և ներկայումս կազմում են 7 մլրդ բարել [1] (տե՛ս *Նկար 1*, ձախ առանցք): Ապացուցված պաշարների առյուծի բաժինն ընկնում է Ադրբեջանի ավեզրյա նավթադաշտերին, որոնցից ամենահարուստը Ազերի-Չիրազ-Գյունեշլի (ԱՉԳ) նավթադաշտն է: Դեռ 1994թ. կնքված համաձայնագրով սահմանված ԱՉԳ նավթադաշտի տարածքում և գործունեության ժամանակահատվածում (1994-2024թթ.) նավթի արդյունահանելի պաշարները (*recoverable reserves*) գնահատվում են 5.4 մլրդ բարել, այսինքն՝ ԱՀ ապացուցված պաշարների 77%-ը: 2009թ. վերջի դրությամբ այստեղից արդեն իսկ արդյունահանվել էր 1.4 մլրդ բարել նավթ (ԱՉԳ հասանելի պաշարների 26%-ը): Համաձայն մասնագիտական գնահատականների, նշանակալի արդյունահանման համար ԱՉԳ հասանելի պաշարները կսպառվեն 2018-20թթ.:


Սպառումը

Հում նավթի սպառումն ԱՀ-ում 1998-2011թթ. չի գերազանցել 125 հազ. բ/օր ցուցանիշը [1] (տե՛ս *Նկար 1*, աջ առանցք): Ընդ որում, 2001-2011թթ. ժամանակահատվածում այն իջնում է մինչև օրական միջինը 85 հազ. բարել, ինչն արտացոլում է Ադրբեջանի որդեգրած քաղաքականությունը՝ հնարավոր

¹ Սույն հոդվածում բերվող նյութն ավելի մանրամասն դիտարկվում է հեղինակի «Ադրբեջանի սոցիալ-տնտեսական համակարգը» մենագրությունում ([4], «Նորավանք» ԳԿՀ, 2012թ.):

* «Նորավանք» ԳԿՀ ավագ փորձագետ, տ.գ.թ.:

րինս իջեցնել հում նավթի սեփական սպառումը և այն հնարավորինս արտահանել: 2011թ. հում նավթի սպառումը կազմել է 74 հազ. բարել օրական (բ/օր) և համաձայն մասնագիտական կանխատեսումների [1, 2]՝ այս ցուցանիշը կպահպանվի առաջիկա 2-3 տարիներին:



Մշակումը

2012թ. հունվարի դրությամբ Ադրբեջանի գործող երկու նավթամշակման գործարանների նոմինալ արտադրողունակությունը կազմում է մոտ 400 հազ. բ/օր (Բաքվի նավթամշակման գործարանը՝ օրական 239 հազ. բ/օր հզորությամբ և Նոր Բաքվի նավթամշակման գործարանը՝ օրական 160 հազ. բ/օր հզորությամբ): Երկու գործարաններն էլ ունեն մոդեռնիզացիայի կարիք, որի համար պահանջվող ներդրումները գնահատվում են \$600-700 մլն [2]:

Արտահանումը

2010թ. Ադրբեջանից հում նավթի արտահանումների ընդհանուր ծավալը կազմել էր 777 հազ. բ/օր, ինչը մոտ 8%-ով ցածր է նախորդ տարվա ցուցանիշից: Արտահանումների մոտ 80%-ը իրականացվում է Բաքու-Թբիլիսի-Ջեյհան (ԲԹՁ) նավթամուղով, որը հիմնականում մղում է ԱԶԳ-ից արդյունահանված նավթը: 2008թ. ԲԹՁ նավթամուղով տեղափոխվում էր նաև

Թենգիզի դաշտից արդյունահանված դազախական նավթը, որը լցանավերով հասցվում էր Սանգաչալի տերմինալ: 2010թ. հուլիսից այս նավթատարով տեղափոխվում է նաև թուրքմենական նավթը: ԲԹՋ-ն շահագործում է *BP* ընկերության կողմից դեկավարվող կոնսորցիումը²: Թուրքական հատվածի օպերատորը *BOTAS International* ընկերությունն է:

ԲԹՋ նավթամուղը հիմնական ռեժիմով աշխատանքները սկսել էր 2006թ. հուլիսից: Նավթամուղի նոմինալ տարողունակությունը կազմում է մեկ մլն բ/օր, որը կարող է բարձրացվել մինչև 1.2 մլն-ի: Իրականում, սակայն, ԲԹՋ-ն աշխատել է նոմինալ տարողունակությունից զգալիորեն ավելի ցածր մակարդակով: Այսպես, 2008թ. ԲԹՋ միջին օրական կոնսորցիումը կազմել էր 0.653 մլն բ/օր: 2011թ. այս նավթատարով տեղափոխվել է մոտ 32.2 մլն տ նավթ, ինչը 13%-ով ավելի քիչ է նախորդ տարվա ցուցանիշից: Համաձայն *BP* ընկերության տվյալների, 2006թ. կեսից մինչև 2011թ. վերջը նավթամուղով տեղափոխվել է 1.13 մլրդ բարել: Դժվար չէ հաշվարկել, որ 2006թ. հուլիսից մինչև 2011թ. վերջը ԲԹՋ-ն աշխատել է իր նոմինալ (մոտ 2.0 մլրդ բարել 2000 օրում) բեռնման միայն 56%-ով:

Նավթատարի աշխատանքի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով 2010թ. հուլիսին Ադրբեջանի և Թուրքմենստանի միջև համաձայնագիր կնքվեց ԲԹՋ-ով թուրքմենական նավթի տեղափոխման համար: 2012թ. փետրվարի 1-ի դրությամբ ԲԹՋ-ով տեղափոխվել է մոտ 4.4 մլն տ թուրքմենական նավթ, որից մոտ 2 մլն-ը՝ 2011թ. ընթացքում: 2011թ. մարտին հայտարարվեց, որ ԲԹՋ թուրքական *BOTAS International* օպերատորը նավթամուղի մեկնարկի պահից արձանագրել է \$31 մլն-ի կորուստ՝ նավթամուղի թերբեռնման հետևանքով: Ակնկալվում է, որ ԲԹՋ ծրագրի գործունեության ավարտին (2045թ.) միայն այս ընկերության կորուստը կկազմի \$2 մլրդ:

Հաջորդ նավթատարը Բաքու-Նովոռոսիյսկ 100 հազ. բ/օր նոմինալ թողունակությամբ խողովակաշարն է: 2010թ. այս խողովակաշարով արտահանման ռեժիմը կազմել էր 45.5 հազ. բ/օր, 2008թ.՝ մոտ 29 հազ.: 2011թ.

² *BP* (30.1%), Ադրբեջանական պետական *Sokar* ընկերությունը (25%), *Chevron* (8.9%), *Statoil* (8.71%), *TPAO* (6.53%), *ENI* և *Total* (5%-ական), *Itochu* (3.4%), *ConocoPhillips* և *Inpex* (2.5%-ական), *Amerada Hess* (2.36%).

այս նավթամուղով տեղափոխվել էր մոտ 2 մլն տ նավթ, ինչը 11.3%-ով ավելի քիչ էր 2010թ. ցուցանիշից: Հիշեցնենք, որ դեռ 1996թ. ստորագրված ռուս-ադրբեջանական համաձայնագրով նախատեսվում էր, որ Բաքու-Նովոռոսիյսկ խողովակաշարով պետք է տեղափոխվի 5 մլն տ նավթ տարեկան՝ \$15.67/տ տրանզիտային սակագնով: 2011թ. երկրորդ կեսին արձանագրվել էր *SOCAR* և *Транснефть* ընկերությունների միջև բանավեճ՝ տրանսպորտային սակագների և տեղափոխվող նավթի ծավալների վերաբերյալ: Ռուսական կողմը, մասնավորապես, պահանջում էր կա՛մ ավելացնել նավթատարի թողունակությունը, կա՛մ վերանայել քվոտաները (տրամադրել չապահովված 3 մլն տ նավթ տարեկան քվոտան ռուսական «*Лukoil*» ընկերությանը):


Երրորդ նավթատարը 145 հազ. բ/օր (կամ մոտ 7 մլն տ տարեկան) նմանալ թողունակությամբ Բաքու-Սուփսա (Վրաստան) խողովակաշարն է: Նավթատարը կանգնեցված էր 2006թ. հոկտեմբերից մինչև 2008թ. նոյեմբերը: 2008թ. տեղափոխումների թողունակությունը կազմել է ընդամենը 13 հազ. բ/օր: 2009թ. հունվար-օգոստոս ժամանակահատվածում այս խողովակաշարի թողունակությունը կազմել է 55 հազ. բ/օր: 2011թ. այս խողովակաշարով տեղափոխվել էր մոտ 2.652 մլն տ նավթ, ինչը 187 հազ. տ ավելի քիչ է նախորդ տարվա ցուցանիշից:

Վերջապես, Ադրբեջանից արտահանվող նավթի ծավալների մոտ 5%-ը բաժին է ընկնում երկաթուղուն և ավտոտրանսպորտին:

Արդյունահանում

Նկար 1-ում բերում ենք Ադրբեջանում հում նավթի արդյունահանման կորը 1998-2011թթ. համար [1] (աջ առանցք, հազ. բ/օր): Բերում ենք նաև 2012-13թթ. համար արդյունահանման կանատեսումները [2]: Ինչպես տեսնում ենք նկարից, 1998-2004թթ. ժամանակահատվածում ԱԶԳ դաշտի «վաղ նավթի» փուլի մեկնարկից հետո արդյունահանումը սկսում է աճել և 2004թ. հասնում է 315 հազ. բ/օր ցուցանիշին: 2005-ից, ԱԶԳ «հիմնական նավթի» արդյունահանման և ԲԹՋ նավթատարի հիմնական ռեժիմով շահագործման մեկնարկից (2006թ. հուլիս) հետո, հում նավթի արդյունահանումն ինտեն-

սիվ կերպով աճում է՝ 2010թ. հասնելով օրական միջինը 1.037 մլն բարել ցուցանիշի: 2010թ. արդյունահանված նավթի այս ծավալից օրական 830 հազ. բարելը (80%) արդյունահանվել է ԱԶԳ-ից: 2011թ. Ադրբեջանում արձանագրվել է նավթի արդյունահանման անկում: Այսպես, 2011թ. սեպտեմբերի 27-ին հայտարարվեց³, որ վերանայվել է 2011թ. համար Ադրբեջանում պլանավորված նավթի արդյունահանման պաշտոնական ցուցանիշը: Այն իջեցվեց օրական 100 հազ. բարելով և կազմեց 900 հազ. բ/օր՝ ողջ 2011թ. համար: Այս ծավալից օրական 800-850 հազ. բարելն արդյունահանվել է ԱԶԳ-ից:



ԱԶԳ արդյունահանումն իրականացվում է նավթադաշտը շահագործող *AIOC* կոնսորցիումի և այդ կոնսորցիումի ղեկավար *BP* ընկերության համալիր եռափուլ ծրագրի շրջանակներում: Դրան հարում է նաև նախնական՝ «վաղ նավթի» փուլը (*EOP*): Նկար 2-ում պատկերում ենք ԱԶԳ արդյունահանման արտադրական սխեման: Այն ներառում է ԱԶԳ «վաղ նավթի» փուլում տեղակայված «Չիրագ» փեզրյա պլատֆորմը (նկարում՝ *Chi-*

³ <http://uk.reuters.com/article/2011/09/27/oil-azerbaijan-suspension-idUKL5E7KR2NF20110927>

rag, EOP, թողարկումը՝ 1997թ. դեկտեմբերին), առաջին փուլի «Կենտրոնական Ազերի» ինտեգրացված պլատֆորմը (*phase 1 «Sentral Azeri»*, թողարկումը՝ 2005թ. փետրվարին), երկրորդ փուլի երկու պլատֆորմները (*phase 2 «West Azeri», «East Azeri»*, թողարկումը՝ 2005թ. դեկտեմբեր և 2006թ. նոյեմբեր համապատասխանաբար) և 3-րդ փուլի «Խորջրյա Գյունեշլի» ինտեգրացված պլատֆորմը (*phase 3 «DWG»*, թողարկումը՝ 2008թ. ապրիլին):

Համալիր եռափուլ ծրագրով պլանավորվում էր, որ ԱԶԳ-ից նավթարդյունահանումը պետք է հասներ իր պիկային՝ 1.24 մլն բ/օր ցուցանիշին դեռ 2010թ., այնուհետև իջներ մինչև օրական 0.9 մլն բ/օր ցուցանիշին՝ 2014-2015թթ. [3]: Մինչդեռ, 2010թ. ողջ Ադրբեջանում արդյունահանված հում նավթի ծավալները կազմել էին օրական 1.037 մլն բարել: Իսկ ԱԶԳ-ից այդ տարի արդյունահանվել էր օրական ընդամենը 0.83 մլն բարել, այսինքն՝ մոտ 400 հազ. բ/օր ավելի քիչ (կամ մոտ 440 մլն բարել 3 տարում), քան նախատեսվում էր նշված եռափուլ ծրագրով: ԱԶԳ ցուցանիշները մնացին գրեթե անփոփոխ նաև 2011թ.: Բնական է, որ պլանավորվող արդյունահանման ցուցանիշների այսպիսի նկատելի թերակատարումը (32%) բացասաբար ազդեց նաև ԱԶԳ դաշտի նավթը տեղափոխող ԲԹՋ նավթամուղի աշխատանքների վրա (տե՛ս վերը): Այսպիսով, կարելի է խափանված համարել թե՛ *BP/AIOC* կոնսորցիումի «ԱԶԳ շահագործման համալիր եռափուլ ծրագրի» իրականացումն Ադրբեջանում, թե՛ ԲԹՋ գործունեությունը տարածաշրջանում՝ որպես զուտ գործարար նավթային ծրագիր:

Հում նավթի արդյունահանման խնդիրները և հեռանկարները

Համաձայն ԱՄՆ Էներգետիկայի դեպարտամենտի Էներգետիկ տեղեկատվության վարչության (*DOE EIA*) 2012թ. հունվարի կանխատեսումների [2], Ադրբեջանում հում նավթի երկար սպասված 1.1-1.2 մլն բարել միջին օրական արտադրությունը կգրանցվի 2012թ., այնուհետև կպահպանվի կամ թեթևակի կնվազի հաջորդ՝ 2013թ. (տե՛ս Նկար 1, ընդհատ գիծ): Ամենայն հարգանք տածելով հիշյալ աղբյուրի նկատմամբ՝ կարծում ենք, որ նման կանխատեսումները լավատեսական են:

Բանն այն չէ միայն, որ անգամ ադրբեջանական *SOCAR* պետական նավթային ընկերության տվյալներով⁴, նավթի արդյունահանման Բարձրակետն Ադրբեջանում ամենայն հավանականությամբ կարճանագրվի միայն 2013թ.: Բանն այն է, որ ըստ մեր գնահատականների, պլանավորվող ցուցանիշներից օրական մոտ 400 հազ. բարել ավելի քիչ ծավալների արդյունահանումը⁵ վկայում է ԱԶԳ շահագործման և այդ նավթի՝ ԲԹՁ նավթամուղով արտահանման ողջ համալիր ծրագրի համակարգային արատի մասին:

Իրոք, այս հարցը քննող տարօրինակորեն սակավաթիվ աղբյուրները ԱԶԳ դաշտից նավթի արդյունահանման պլանավորվող ծավալների և Ժամանակացույցի նշված խափանումը բացատրում են հիմնականում հետևյալ երեք գործոններով կամ դրանց որևէ համադրությամբ.

- 2008թ. օգոստոսյան վրաց-օսական պատերազմ և ՌԴ-ի հետ Վրաստանի առճակատում, որին նախորդեց ԲԹՁ նավթամուղի մեկ հատվածի պայթեցումը Թուրքիայի տարածքում, որի հետևանքով նվազեցվեց ԱԶԳ-ից նավթի արդյունահանումը,
- 2010թ. Մեքսիկական ծոցում *BP* ընկերության նավթային պլատֆորմի վթարի ու առաջացած բնապահպանական աղետի հետևանքներով, որի արդյունքում *BP*-ն ստիպված է ԱԶԳ ավեզրյա նավթադաշտի Ազերի հատվածում տեղակայված իր պլատֆորմներում ավելի հաճախակի տեսչական կանգնեցումներ իրականացնել,
- 2008թ. սեպտեմբերի 17-ին ԱԶԳ նավթադաշտում տեղակայված *BP* ընկերության՝ «Կենտրոնական Ազերի» նավթային պլատֆորմի լուրջ վթարի⁶ և դրա վերացման հետ կապված միջոցառումները:

Սակայն, բոլոր այս գործոնների հանգամանակի զննումը գալիս է ապացուցելու, որ դրանք առանձին-առանձին և միասին վերցրած՝ անկարող են բացատրել պլանավորվող ցուցանիշների հիշյալ թերակատարումը:

⁴ <http://uk.reuters.com/article/2011/09/28/azerbaijan-oil-idUKL5E7KS6FP20110928>

⁵ Կամ 200 հազ. բ/օր ավելի քիչ, քան 2009-10թթ. *BP/AIOC* կոնսորցիումի վերանայված ցուցանիշները:

⁶ Այս վթարի մասին տեղեկությունները հայտնի դարձան միայն *Gardian* ամսագրի կողմից ԱՄՆ դեսպանությունների հաղորդագրությունների 2010թ. դեկտեմբերի 15-ի *Wikileaks*-յան հրապարակումից հետո:

Կան բոլոր հիմքերը պնդելու, որ պլանավորված ծավալներին հասնելու գործում թերացումն այստեղ ունեւր «սիստեմային» բնույթ: Դրա հիմնական պատճառները կայանում են [4].

1. Ջրի և նավթարդյունահանման ընթացքում ստացված, այսպէս կոչված, «հարակից գազի» ոչ բավարար ծավալներով հետմղման մեջ դեպի ԱԶԳ նավթային հորիզոններ, նավթաբեր շերտերում արդյունահանման համար անհրաժեշտ ճնշումն ապահովելու համար,
2. ԱԶԳ նավթի արդյունահանելի պաշարների սկզբնական գնահատականների ուռճացման մեջ,
3. ԱԶԳ նավթադաշտից օրական մեկ մլն և ավելի բարել նավթ արդյունահանելու համար *BP/AIOC* սկզբնական եռափուլ համալիր ծրագրի ընդհանուր հզորությունների անբավարար մակարդակի մեջ:

Իր հերթին, հարակից գազի հետ` դեպի ԱԶԳ դաշտ ոչ բավարար ծավալների մղման պատճառը, ամենայն հավանականությամբ, այն է, որ սկսած 2007-ից` միանգամայն համահունչ «Ալիևի դոկտրինի» դրույթներին, ԱՀ-ն ձեռնամուխ է լինում իր` այս անգամ գազային պաշարները որպէս տարածաշրջանային աշխարհաքաղաքականության առավել ճկուն լծակ օգտագործելու ծրագրին: Ենթադրվում էր, որ ադրբեջանական (հեռանկարում` նաև թուրքմենական) գազը պետք է դուրս մղի տարածաշրջանում ռուսական (և իրանական) գազի մատակարարումները, ամրացնի ԱՀ դիրքը տարածաշրջանում` ամրապնդելով «Հարավային Կովկասի էներգետիկ կամուրջը» Ադրբեջան-Վրաստան-Թուրքիա-Իսրայել առանցքով, վարժեցնի Թուրքիային ադրբեջանական գազը ԵՄ հասցնելու գործում բացառապէս տրանզիտային, այլ ոչ թե «գնող, վաճառող» երկրի դերակատարմանը: Մյուս կողմից, ԱՄՆ իշխանական և կուսակցական տարբեր օղակները, այդ թվում` ԱՀ-ում ԱՄՆ դեսպանությունը, էական ճնշում էին բանեցնում ԱՀ-ի վրա, որպէսզի.

- ապահովի 2006-07թթ. ձմեռները Վրաստանում «տաք» ու անցնցում անցկացնելու մարտավարական, հրատապ խնդրի լուծումը,

- իրականացվի Վրաստանին ՌԴ-ից ստացվող գազից «կտրելու» և դեպի Ադրբեջան-Թուրքիա-Իսրայել ու ԵՄ «էներգետիկ կամուրջն» ուղղորդելու ռազմավարական ծրագիրը,
- սպասարկվի ու ամրապնդվի Թուրքիայի նոր, ռազմավարական նշանակության դերակատարումը «Մեծ Միջին Արևելքի» տարածաշրջանում ընթացող և գալիք կարևորագույն գործընթացներում:

Արդյունքում՝ *BP* ընկերությունը 2006-08թթ. գտնվում էր ԱՀ իշխանությունների, պետական *SOCAR* ընկերության, ԱՄՆ իշխանական ու կուսակցական օղակների, Վրաստանի (ու Թուրքիայի) կառավարությունների անընդհատ ճնշման տակ, որով պահանջվում էր սահմանափակել դեպի դաշտ հարակից գազի հետմղման ծավալները, օգտագործելով այն առաջին հերթին Վրաստանի (և Թուրքիայի) գազամատակարարման համար, հատկապես ձմեռային սեզոններին: Արդյունքում՝ տեղի տալով այս ճնշումներին⁷ և սահմանափակելով հարակից գազի հետմղման ծավալները, դաշտում ներքին անբավարար ճնշման հետևանքով «Կենտրոնական Ազերի» պլատֆորմի արտադրողականությունն ընկել էր պլանավորված ցուցանիշներից դեռ ողջ 2007թ. և 2008թ. առաջին 10 ամիսներին: Դժվար չէ հաշվարկել, որ 2007-11թթ. ժամանակահատվածում «Կենտրոնական Ազերի» պլատֆորմի պլանավորված ծավալներից թերարտադրումը կազմել էր միջինը մոտ 242 հազ. բ/օր, կամ վերը նշված ԱԶԳ պլանավորված ցուցանիշից թերակատարման (400 հազ. բ/օր) մոտ 55%: Թերակատարման մնացած 45%-ը վերը նշված 2-րդ և 3-րդ պատճառների արդյունքն է:

Փրկելու համար ստեղծված իրադրությունը և ԱԶԳ-ից արդյունահանվող նավթը բաղձալի մեկ մլն և ավելի բ/օր ցուցանիշին վերջապես հասցնելու նպատակով *BP* ընկերությունը 2010-ից ստիպված եղավ ձեռնամուխ


⁷ Իր հերթին, *BP* ընկերությունը ճնշում էր բանեցնում Ադրբեջանի իշխանությունների վրա, որպեսզի ամրապնդի իր գրեթե մենաշնորհային դրությունը նավթարդյունահանման ոլորտում, վերահսկման տակ առնի ԱԶԳ, այսպես կոչված, «խորքային գազի», ինչպես նաև Շահ Դենիզի գազակոնդենսատային դաշտի շահագործումը: Պարադոքսալ կերպով 2008թ. օգոստոսյան վրաց-ռուսական հակամարտությունը և դրա արդյունքում ձևավորված տարածաշրջանային նոր կոնֆիգուրացիան դյուրինացրին *BP* այս նպատակների հաջող իրականացումը (այս հարցերն ավելի մանրամասն քննվում են [4]-ում):

լինել նոր, ծավալուն ու թանկարժեք՝ ԱԶԳ 4-րդ փուլի ծրագրի իրականացմանը⁸: Խոսքը \$6 մլրդ ընդհանուր արժողությամբ Չիրագ Նավթային ծրագրի (COP) մասին է, որով ԱԶԳ դաշտի Չիրագ հատվածում նախատեսվում է տեղակայել նոր ավերոյա պլատֆորմներ: Դրանցից առաջինը՝ «Արևմտյան Չիրագը» (*West Chirag*), կտեղակայվի «Խորջրյա Գյունեշլի» և ԱԶԳ «վաղ նավթի» փուլի «Չիրագ 1» պլատֆորմների միջև: Ներկայումս ընթանում են «Արևմտյան Չիրագ» պլատֆորմի մոնտաժի և տեղակայման աշխատանքները:

Թեև COP ծրագրի մեկնարկով BP ընկերությունը հաստատեց ԱԶԳ շահագործմանն ուղղված իր վճռականությունը՝ փորձելով շտկել նախկին ժամանակահատվածում նավթի արդյունահանման պլանավորված ցուցանիշների թերակատարումը, կան որոշ հիմքեր կասկածելու, որ անգամ COP ծրագրի իրականացմամբ ԱԶԳ արդյունահանումն այդպես էլ չի հասնի օրական մեկ մլն բարել ցուցանիշի:

Նկար 3

ԱԶԳ դաշտի նավթի արդյունահանման ծավալների ժամանակացույցը՝ մինչև COP ծրագրի իրականացումը (ձախից) և դրանից հետո (աջից): ԳԷԿԶ, 2011թ.



Այսպես, համաձայն Գլոբալ էներգետիկ հետազոտությունների կենտրոնի (ԳԷԿԶ) վերջերս կատարած հաշվարկների⁹, այս ծրագրի իրականացումը հիմնականում թույլ կտա վերաբաշխել ԱԶԳ դաշտի ներքին ճնշումը

⁸ Ինչպես նաև ԲԹՁ-ն այլ աղբյուրներից «լցման» գործին (տե՛ս վերը):
⁹ <http://www.cges.co.uk/resources/articles/2011/07/13/azerbaijan%E2%80%99s-oil-output-begins-to-slip>

և երկարացնել օրական մոտ 900 հազ. բարել արդյունահանման ժամանակահատվածը պլատոյի ռեժիմում, այլ ոչ թե ապահովել դեռ 2006-07թթ. պլանավորված 1.2 մլն բ/օր պիկային արդյունահանումը:

Նկար 3-ում բերում ենք ԳԷԿԷ կառուցած ԱԶԳ արդյունահանման ժամանակացույցը՝ հազ. բ/օր չափողականությամբ: Ձախից պատկերված է մինչև COP ծրագրի մեկնարկը ԱԶԳ արդյունահանման 2010թ. ճշգրտված ցուցանիշներով ժամանակացույցը՝ վերջինիս վրա COP ծրագրի (նարնջագույն) ժամանակացույցի պարզ ավելացումով: Իսկ աջից պատկերված ժամանակացույցն արդեն հաշվի է առնում COP ծրագրի իրականացման հետևանքով ԱԶԳ դաշտում ներքին ճնշման վերաբաշխումը: Վերջինս թույլ կտա փոփոխել ԱԶԳ առաջին 3 փուլերի պլատֆորմների արդյունահանման ռեժիմները և երկարացնել պլատոյի ռեժիմում դաշտի շահագործման ժամանակահատվածը: Սակայն, համաձայն ԳԷԷԿ գնահատականների, նույնիսկ COP ծրագրի իրականացմամբ հնարավոր կլինի ապահովել միայն օրական մոտ 900 հազ. բարել արդյունահանումը պլատոյի ռեժիմում մինչև 2016թ.:

* * *

Ավարտելով Ադրբեջանի նավթային ոլորտին նվիրված մեր հակիրճ քննությունը՝ անհրաժեշտ ենք համարում կատարել հետևյալ դիտարկումը:

ԱԶԳ «հիմնական նավթի» եռափուլ ծրագրի խափանումը, միջազգային նավթագազային ընկերությունների «շանտաժին» հլու ենթարկվելը, ինչպես նաև մի շարք այլ գործոններ հանգեցնում են դեռ 1994թ. Ադրբեջանին համատարած բարօրություն ու սոցիալ-տնտեսական շեշտակի զարգացում խոստացած «Ալիևի դոկտրինից» շոշափելի հիասթափության: Այն կարող է ավելի խորանալ, եթե Շահ Դենիզի (2-րդ փուլ), բնական գազի ու կոնդենսատի այլ դաշտերի արդյունահանման ակնկալիքներն ունակ չլինեն կոմպենսացնել նավթային ոլորտի եկամտաբերության անխուսափելի անկումը: Այս հիասթափությունը, զուգորդված հասարակության խորացող սոցիալական բևեռացմամբ, հանրային և անձնական ազատությունների բռնաճնշմամբ, ազգային փոքրամասնությունների նկատմամբ համակար-

գային բնույթ ունեցող խտրականություններով, պայթյունավտանգ իրավիճակ է ստեղծում երկրում: Առավել ևս, եթե հաշվի առնենք Ադրբեջանական Հանրապետությունում ժողովրդավարության սաղմնային մակարդակը, քաղաքացիական հասարակության թերզարգացածությունը ու, հատկապես, իշխանափոխության մեխանիզմների և իշխանության կիրառման, ըստ էության՝ կիսաֆեոդալ բնույթը:

Այսպիսի իրավիճակում իշխանական վերնախավում աճում է գայթակղությունը՝ վերաուղղորդել աճող հիասթափությունն ու բացասական էներգիան այլ, ցանկալի է՝ երկրի ազգային սահմաններից դուրս (Արցախ, Հայաստան, Իրան, Հվ. Կովկաս) ուղղություններով և/կամ դեպի այլ թիրախներ (ազգային և կրոնական փոքրամասնություններ, «ագահ իմպերիալիստներ», «դավադիր և նենգ հայեր», «ներքին թշնամիներ», տարատեսակ «դավաճաններ» և այլն): Ներկայիս իրադրությունն Իրանի շուրջ, այսպես կոչված «Արաբական գարնան» իրողությունները և մեր տարածաշրջանի համար էական մի շարք երկրներում (ՌԴ, Ֆրանսիա, ԱՄՆ և այլն) նախագահական ընտրություններով պայմանավորված ընդհանուր «սպասողական» աշխարհաքաղաքական *թայմաութը* կարճաժամկետ հեռանկարում (2012-13թթ.) նպաստում է տարածաշրջանի ապակայունացմանը:

Դե, իսկ Ադրբեջանի արտուղային ռազմական բյուջեն, միլիտարիստական հռետորաբանությունը, տասնամյակներ տևող ու համատարած սերմանվող հայատյացությունն ու քսենոֆոբիան վտանգը դարձնում են լուրջ ու անմիջական:

Աղբյուրներ և գրականություն

1. BP Statistical Review of World Energy. 1998-2011.
2. US DOE Energy Information Administration. Azerbaijan: Country Analysis Brief. 9 Jan, 2012.
3. Azeri, Chirag, Gunashli Full Field Development Produced Water Disposal Project. Environmental and Socio-economic Impact Assessment. Final Report, AIOC/BP. January 2007.
4. *Մարջանյան Ա.*, Ադրբեջանի սոցիալ-տնտեսական համակարգը, «Նորավանք» ԳԿՀ, 2012թ.:

Հուշագիր հեղինակին

«Գլոբուս» վերլուծական հանդեսը հրապարակում է վերլուծական բնույթի հոդվածներ՝ նվիրված Հայաստանի և Հայության ռազմաքաղաքական, տեղեկատվական և վերջինիս մեջ ընդգրկված քաղաքակրթական ու հոգևոր անվտանգության խնդիրներին, հայկական համայնքների և տարալեզու-տարադավան հայերի կազմակերպչական անվտանգության հիմնահարցերին:

«Գլոբուս» ամսագրի խմբագրական խորհրդի կողմից *պատվիրված* նյութերը հանդիսանում են «Նորավանք» ԳԿՀ-ի սեփականությունը: Ձեռագրերը գրախոսվում են: «Գլոբուս» հանդեսի հրապարակումները արտահայտում են հեղինակների տեսակետները:

Հոդվածների ներկայացման ձևը

1. Հոդվածները ներկայացվում են տպագիր և համակարգչային շարվածքով (*MS WORD* ծրագրով), «*Sylfaen*» տառատեսակով, 11 տառաչափով (ֆոնտով), ծավալը չպետք է գերազանցի 10 էջը:
2. Առաջին անգամ հոդված ներկայացնելիս պարտադիր կցել հեղինակի ինքնակենսագրությունը (*CV*):
3. Էջը պետք է համապատասխանի A4 չափին, լուսանցքները ձախից, աջից, վերնից ու ներքևից՝ 2 սմ: Տողերի միջև հեռավորությունը՝ 1.5:
4. Ինտերնետային աղբյուրների հղումները նշել տողատակում:

Խմբագրություն

«ԳԼՈԲՈՒՍ» ամսագիր
Խմբագրական խորհուրդ

Հիմնադիր՝ «ՆՈՐԱՎԱՆԲ» գիտակրթական հիմնադրամ
ՀՀ Արդարադատության նախարարության
Պետական ռեգիստրի վկայական թիվ 221 տրված 17.05.2001թ.
Հասցե՝ ՀՀ, 0026, Երևան, Գարեգին Նժդեհի 23/1
Կայք՝ www.noravank.am
Էլ.-փոստ՝ globus@noravank.am, office@noravank.am
Հեռախոս՝ + (374 10) 44 38 46
Ֆաքս + (374 10) 44 04 73

Համարի պատասխանատու՝ Լուսինե Բաղրամյան

Հանձնված է տպարան 11.05.2012թ.
Թիվ 5 (26), 2012թ.
Տպարանակը՝ 200:

Ֆորմատը՝ 70x100 1/16: Պայմանական 3 մամուլ:
Տառատեսակը՝ Sylfaen
Տպագրվել է «Գասպրինտ» ՄՊԸ տպարանում